# ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 40 (1490) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 06, 2010
VOLUME 30, NO. 40 (1490) SATURDAY, NOVEMBER 06, 2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ԿԸ ՊԱՐԶԱԲԱՆԷ ՃՕ ՊԱՅՏԸՆԻ ԽՕՍՔԵՐԸ

*Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատունը հաղորդագրութիւն մը տարածած է, որ կու գայ հերքելու համացանցի YouTube կայքի վրայ փոխնախագահ Ճօ Պայտընին վերագրուող խօսքերը այն մասին, որ ՀՀ գործող Նախագահ Սերժ Սարգսեան հեռաձայնած է իրեն եւ խնդրած է Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցով ճնշում չգործադրել Գոնկրէսի վրայ, քանի տակաւին հայ-թրքական բանակցութիւնները ընթացքի մէջ են:*

*«Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեան Ամերիկայի Միացեալ Նահանգներու փոխնախագահ Ճօ Պայտընի հետ չէ խօսած Նախագահ Օպամայի Ապրիլ 24-եան ուղերձի բովանդակութեան մասին եւ չէ փորձած յետաձգել Ներկայացուցիչներու Տան 252 բանաձեւի քննարկումը»:*

*«Փոխնախագահը եւ Նախագահ Սարգսեանը 2009 թուականի Ապրիլին երկու անգամ խօսած են: Այս խօսակցութիւններու ընթացքին փոխնախագահը ըսած է Նախագահ Սարգսեանին, որ Միացեալ Նահանգները կը հաւատայ, որ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու կարգաւորումը եւ սահմաններու բացումը ճանապարհ կը հարթեն Հայաստանի աւելի լաւ ապագայի համար եւ յայտնած է Միացեալ Նահանգներու աջակցութիւնը անոր առաջնորդութեան համար», - ըսուած է հաղորդագրութեան մէջ:*

*Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Արմէն Արզումանեան նոյնպէս հերքած է YouTube կայքէջի վրայ յայտնուած տեսանիւթին մէջ Պայտընին վերագրուող խօսքերը:*

## ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ. «ԱՅՍՊԷՍ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԴԷՊՔՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ԿԸ ՅԱՆՁՆԵՆ»

*Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան Նոյեմբեր 2-ին յայտարարած է, որ այսպէս շարունակելու պարագային իշխանութիւնները կը յանձնեն Լեռնային Ղարաբաղը: Հայ Ազգային Գոնկրէսի ղեկավարը Վանաձոր կատարած իր այցելութեան ընթացքին «Ազատութիւն» ռատիոկայանի թղթակիցին ըսած է.- «Մեր ազգն էլ, մեր պետութիւնն էլ, Ղարաբաղն էլ թաւագլոր գնում են դէպի կործանում: Մեր խնդիրն է դա կանխել, ուրիշ խնդիր չունենք: Մենք ամէն ինչ անում ենք այդ խնդիրը լուծելու համար: Խնդրեմ, եթէ կան մարդիկ, որոնք ուզում են օգնել, աւելի ուժեղացնել՝ թող գան, օգնեն: Մենք միայն շնորհակալ կը լինենք»:*

*Անդրադառնալով այն հարցին, որ ընդդիմութեան հանրահաւաքներուն մասնակցողներու թիւը նուազած է, Լեւոն Տէր-Պետրոսեանը ըսած է.- «Թող նուազի: Ես վստահ եմ՝ մեր խնդիրն է պահել այս ջահը, պահել ակտիւը, որը չի կոտրւում, չի նուազում: Աշխարհում, ընդհանրապէս, զանգուածները քաղաքականութեանը մասնակցում են ընտրութիւնից ընտրութիւն: Այն, ինչ կատարւում է Հայաստանում, հրաշք է: Աշխարհի ոչ մի երկրում այդպիսի բան չկայ, որ ընտրութիւնից 2-2,5 տարի յետոյ ժողովուրդը, այո, թէկուզ նուազած՝ էլի գայ իր պահանջներին տէր կանգնի»:*

Շար.ը էջ 4

## ՎՐԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ԵՆ ԵՐԿՈՒ ՀԱՅԵՐ՝ ԼՐՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ

*Վրաստանի իշխանութիւնները ձերբակալած են խումբ մը անձիք, որոնց մէջ նաեւ երկու հայեր, որոնք բոլորն ալ մեղադրուած են Ռուսական հետախուզութեան հաշւոյն լրտեսութեան կատարելու մէջ:*

*Փաստաբան Նանա Ցուլացէ, Նոյեմբեր 1-ին «Ինթըրփրէս-Նիւզ» գործակալութեան տեղեկացուցած է որ, Հոկտեմբեր 17-ին վրացի Իրաւապահները ձերբակալած են Վրաստանի քաղաքացիներ՝ Արմէն Գէորգեանին եւ Ռուբէն Շիկոյեանին:*

*«Ձերբակալուածներու յստակ թիւը ինծի ծանօթ չէ: Գործի քննութիւնը կ՚ընթանայ լիակատար գաղտնիութեան պայմաններուն մէջ: Յայտնի չէ նաեւ, թէ իրաւապահները երբ կը պատրաստուին հետաքննութեան մասին տեղեկատուութիւն հրապարակել: «Ինչ կը վերաբեր իմ պաշտպանեալներուն, անոնք ազգութեամբ հայ են, Վրաստանի քաղաքացիութիւն ունին», - ըսած է Ցուլաձէ:*

*Փաստաբանի խօսքերով, մինչեւ ձերբակալութիւնը երկուքն ալ աշխատած են բեռներու եւ նաւթամթերքի ստուգումներով զբաղուող ընկերութեան մը մէջ: «Գէորգեանը այդ ընկերութեան տնօրէնն էր, Շիկոյեանը կը վարէր անոր տեղակալի պաշտօնը», - յայտնած է Ցուլաձէ:*

*Վրացական գործակալութիւնը նաեւ կը տեղեկացնէ, որ Արմէն*

Շար.ը էջ 4

## ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԸ ՅԱՂԹԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԸ ՊԱՀԵՑԻՆ ԾԵՐԱԿՈՅՏԸ
### ՊՐԱՈՒՆ, ՊՈՔՍԸՐ, ՇԻՖ ԵՒ ԿԱԹՕ ԸՆՏՐՈՒԵՑԱՆ



*Նախագահ Պարաք Օպամա մամուլի ասուլիսի ընթացքին*

*Նախընտրական հարցախոյզերը ճիշդ դուրս եկան ու Նոյեմբեր 2-ին տեղի ունեցած Ամերիկեան ընտրութիւններու ընթացքին մեծ յաջողութիւններու հասան Հանրապետական կուսակցութեան թեկնածուները: Հանրապետականները Գոնկրէսի Ներկայացուցիչներու Տան ընտրութիւններուն Դեմոկրատ կուսակցութենէն խլեցին աւելի քան 60 աթոռներ, որու շնորհիւ ձեռք ձգեցին մեծամասնութիւնը:*

*Ծերակոյտի ընտրութիւններուն եւս, Հանրապետականները հասան յաջողութիւններու, սակայն ոչ բաւարար չափով: Դեմոկրատները կարողացան Ծերակոյտէն ներս պահել իրենց մեծամասնութիւնը, թէեւ աւելի փոքր չափով: Դեմոկրատներու ներկայիս ունին 59 ծերակուտականներ, սակայն Երեքշաբթի օրուայ արդիւնքներու վերջնական յստակացումէն ետք անոնց թիւը պիտի դառնայ 52 կամ 53:*

*Նահանգային կառավարիչներու ընտրութիւններուն եւս, Դեմոկրատները արձանագրեցին մեծ կորուստներ:*

*Այս արդիւնքները առաջին հերթին պարտութիւն էին Նախագահ Պարաք Օպամայի համար, որ իր պաշտօնավարութեան առաջին երկու տարիներուն չկարողացաւ բաւարար չափով բարելաւել տնտեսութիւնը եւ նուազեցնել անգործներու թիւը: Հանրապետականները, որոնք ամէն քայլափոխի ընդդիմացան Օպամայի ծրագիրներուն, յաջողեցան ժողովուրդի դժգոհութիւնը օգտագործել ի նպաստ իրենց:*

*Հանրապետականներու յաղթանակները արձանագրուեցան ընդհանրապէս Ամերիկայի կեդրոնական մասերուն մէջ: Ատլանտեանի ափին Հանրապետական յառաջխաղացքը կասեցուց Նիւ Եորքը, իսկ Խաղաղականի ափին՝ Քալիֆորնիան:*

*Քալիֆորնիոյ մէջ Դեմոկրատ թեկնածուները արձանագրեցին տպաւորիչ յաղթանակներ: Հայկական կազմակերպութիւններու աջակցութիւնը վայելող բոլոր թեկնա-*

Շար.ը էջ 4

## ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՈՒԱԾ Է ԹՈՒՐՔԻՈՅ «ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔԻ» ՑԱՆԿԷՆ

*Անցեալ շաբաթուայ ընթացքին Թուրքիոյ Ազգային Ապահովութեան Խորհուրդը վերատեսութեան ենթարկած է «Կարմիր գիրք» անուանումով փաստաթուղթը, որ նաեւ կը կոչուի «գաղտնի սահմանադրութիւն»: Թուրքիոյ եւ դրացի երկիրներու միջեւ յարաբերութիւններուն վերաբերող փաստաթուղթը, վերատեսութեան կ՚ենթարկուի հինգ տարին անգամ մը:*

*Թուրքիոյ համար սպառնալիք նկատուող երկիրներու ցանկէն հանուած են Հայաստանը, Վրաստանը, Պուլկարիան եւ Սուրիան: Ցանկէն դուրս հանուած է նաեւ Իրանը, որ անցեալին կը նկատուէր գլխաւոր սպառնալիք ներկայացնող երկիր:*

*Սպառնալիք ներկայացնողներու ցանկին վրայ կը շարունակեն մնալ Յունաստանը եւ Ռուսաստանը:*

*Թուրքիա առաջին անգամ ըլլալով իրեն համար սպառնալիք երկիր դասած է Իսրայէլը: Փաստաթղթին մէջ նշուած է, որ Իսրայէլի գործողութիւնները տարածաշրջանէն ներս կրնան հանգեցնել սպառազինութիւններու մրցավազքի: Թուրքիոյ Ազգային Ապահովութեան Խորհուրդի փաստաթուղթին մէջ նաեւ ըսուած է, որ Միջին Արեւելքը պէտք է հռչակուի միջուկային զէնքէ զերծ տարածաշրջան:*

*Թուրքիոյ յարաբերութիւնները Իսրայէլի հետ խիստ սրեցան այս տարուայ Մայիսին, երբ Իսրայէլի զինուած ուժերը յարձակեցան Կազայի հատուած մարդասիրական օգնութիւն տեղափոխող նաւերու վրայ, որու ընթացքի սպաննուեցան 9 թուրքեր:*

# «ԱՊԷ, ՊԷՏՔ Ա՞ ԽԱՌՆՈՒԵ՞ՆՔ»

ԷԴԻԿ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Ուշ երեկոյեան եւրոպական երկրներից ստացուած լուրերն էին, հաւանաբար, պատճառը, որ շատ վատ քնեցի: Քնելը որն է՛ կարո՞ղ ես քնել, երբ ցոյց են տալիս, թէ ինչ անկարգութիւն է տիրում Փարիզի նման հրաշակերտ քաղաքի փողոցներում: Ով Փարիզում գոնէ մէկ անգամ եղել է, կը հաստատի, որ այնտեղ չի կարելի նոյնիսկ սիգարետի մոխիր թափահարել օդում, էլ ուր մնաց՝ քարեր նետել, խանութներ ու անուադողեր այրել, ոստիկան հրմշտել...

Ամենամեծ ցաւն էլ էն է, որ այս ամէնը ժողովուրդն է անում, ոչ թէ մի անխոհեմ քաղաքական գործիչ կամ բանդա, որոնց շատ հեշտ է մեղադրելը:

Մարդիկ են բողոքում, բողոքում են, բողոքում են.... Մարդկանց բողոքը Փարիզից դուրս է եկել, տարածուել Ֆրանսիայի միւս քաղաքները, Ֆրանսիայից էլ դուրս է եկել ու տարածուել Եւրամիութեան այլ երկրներ՝ Իտալիա, Աւստրիա... Բողոքում են, հասկանո՞ւմ էք՝ բո-ղո-քում:

Սարկոզին որոշել է թոշակի անցնելու տարիքը 60-ից հասցնել 62-ի, եւ մարդիկ բողոքում են: Բնակա՞ն է: Իհարկէ: Նոյն Սարկոզին խստացնում է Ֆրանսիայում էմիգրանտների բնակութեան ռեժիմը՝ դարձեալ բողոքում են: Բնակա՞ն է: Իհարկէ: Դարձեալ նոյն Սարկոզին արգելում է հասարակական վայրերում երեւալ ողջ մարմինը ծածկող հագուստներով՝ էլի բողոքում են, հաւարը գցում Բեն Լադենին: Բնակա՞ն է: Իհարկէ:

Հետաքրքիր է, Ֆրանսիայի իշխանութիւնները կը ցանկանայի՞ն, որ բողոքի ցոյցերն ու ակցիաները մէկէն դադարէին: Իհարկէ կ՚ուզենային: Բայց ո՞նց, կախարդական փայտիկո՞վ: Այդքան բա՞րդ:

Կարծում եմ՝ այստեղ մեր իշխանութիւնները սրեցին իրենց ուշադրութիւնը: Այնուամենայնիւ, կախարդական փայտիկից աւելի լաւ միջոց կայ հասարակութեանը հնդարտեցնելու, եթէ չասենք՝ հնազանդեցնելու, որովհետեւ հնազանդեցնել տերմինը եւրոպական լեքսիկոնում իմաստային առումով բոլորովին այլ բան է նշանակում եւ նոյնիսկ՝ շատ անյարմար բան: Ինչ որ է:

Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան մէջ (հիմնական օրէնքում) ոչ մի տեղ գրուած չէ, որ ՀՀ քաղաքացին պարտաւոր է հլու-հնազանդ ենթարկուել երկրի իշխանութիւններին: Երկրի օրէնքներին՝ այո, բայց ոչ երկրի իշխանութիւններին: Դատելով այն իրավիճակից, որ ի տարբերութիւն Ֆրանսիայի, տիրում է Հայաստանում, կարծում եմ, ժամանակն է լրացնել մեր սահմանադրութեան այդ բացը, քանզի հայ ժողովուրդը, դարձեալ ի տարբերութիւն Ֆրանսիայի ժողովրդի, նախընտրում է իշխանութիւններին եւ ոչ թէ օրէնքներին ենթարկուել:

Մի՞թէ կարելի է կոյր լինել ու այս լուսաւոր ժամանակներում չտեսնել, թէ ինչպիսի յաջողութիւններ են արձանագրել նորանկախ Հայաստանի իշխանութիւնները: Նրանք անցած 20 տարում հասել են ժողովրդի հնազանդեցմանը, ինչին աշխարհի շատ երկրներ չեն հասել անկախութեան հարիւրամեակների, որոշների դէպքում նոյնիսկ՝ հազարամեակների ընթացքում:

Տիգրան Սարգսեանը՝ մեր վարչապետը, կարող է Ֆրանսիայի աշխատաւորութեանը թոշակի անցկացնել նոյնիսկ 50 տարեկանից: Սարկոզիի վարչախմբի անդամներին խնդրում եմ չուշաթափուել: Հաւատացնում եմ՝ Ֆրանսիայի բիւջէն չի էլ զգայ, թէ ինչպէս դա տեղի ունեցաւ: Մեր վարչապետը դոլար-եւրո այնպիսի լողացող կուրս կը նկարի, այնպիսի աննկատ ու սրընթաց գնաճ կ՚ապահովի, որ դրանից ստացուած եկամուտները (ձեր դէպքում՝ պետական) մի քանի օրում աւելցուկով կը ծածկեն Ֆրանսիայի նման երկրի բիւջէի չնախատեսուած բոլոր ծախսերը: Զգիտեմ, հաւանաբար Սարկոզիի բախտից է, Հայաստանում ճիշդ այդպիսի մի գործընթաց է հիմա իրականացւում: Մարդկանց աշխատավարձերն ու թոշակները որոշել են բարձրացնել: Դեռ չեն բարձրացրել, որոշել են բարձրացնել: Բայց գնաճն արդէն այնպէս է մտել շուկայ եւ սուպերմարկետներ, դոլարն այնպէս է «չոքել» դրամի առաջ (դրամը մեր փողն է), որ, պետական միջամտութիւն դրսեւորելու դէպքում, մեր իշխանութիւնները կարող են եռապատկել պաշտպանութեան ոլորտին ուղղուած ծախսերը: Ուրեմն, թող Սարկոզին սովորի, թէ ինչպէս կարելի է լուծել այնպիսի մի ճղճիմ հարց, ինչպիսին թոշակային տարիքը երկու տարով այսկողմ-այնկողմ անելն է: Հայաստանում բողոք կա՞յ: Չկայ:

Ի՞նչ: Ֆրանսիացիները գնաճի դէմ նո՞յնպէս կը բողոքեն: Դրա համար էլ ասում ենք՝ քանի որ ապաշնորհ էք, ՀՀ իշխանութիւններին՝ կառավարութիւնով, ազգային ժողովով, բանով, ժամանակաւորապէս ներկրէք Ֆրանսիա ու տեսէք, թէ ինչ կը կատարուի:

Ասեմ ձեզ, որ մարդիկ շատ շուտ են մոռանում գնաճի մասին, երբ նրանց իրենց մայրենի լեզուով ապագայ ճոխ ծրագրեր ես հրամցնում: Մեր գիւղնախարարն, օրինակ, վարժ ֆրանսերէնով ձեզ կարող է բացատրել, որ գնաճ կոչուող այդ բոբոն արդիւնք է ֆրանսիայի ժողովրդի գլխին թափուած երկնային աղէտի: Բայց դարդ չանէք, սիրելի եղբայրներ, փառք Աստծոյ, ծրագրեր ունենք, որ աշխարհը չունի: Այդ ծրագրերով նախատեսւում է Ֆրանսիայի տարածքում հակակարկտային կայանքնէի այնպիսի ցանց ստեղծել, որ նոյնիսկ Լոնդոնի վրայ այլեւս տեղումներ չլինեն: Իսկ ինչ վերաբերում է անասունների ու մշակաբոյսերի տեղական սորտերին, ապա պէտք է շատ արագ վերացնել դրանք, որովհետեւ երկնային աղէտներից խուսափելու լաւագոյն միջոցը անասուններ եւ մշակաբոյսեր ներկրելն է: Այդպէս ենք վարւում Հայաստանի ու հայ ժողովրդի հետ: Տեսէ՛ք՝ Հայաստանում բողոք կա՞յ: Չկայ:

Մեր օրէնսդիրներն էլ քիչ խորհուրդներ չունեն Սարկոզիին տալու: Այ մարդ, բա կարելի է՞ յանպատրաստից վերցնել ու մարդկանց յայտարարել, թէ ձեր թոշակի անցնելը երկու տարով յետաձգելու եմ: Պարզ չի՞ որ կը բողոքեն: Նախ հարկաւոր էր միջանկեալ օրէնքնե-

Տար.ը էջ 5

# ՈՎ Է ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԹՇՆԱՄԻՆ

ԷԴԳԱՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Ո՞րն է մեր երկրում ժողովրդավարութեան բացակայութեան հիմնական պատճառը: Այս հարցի շուրջ մենք յաճախ ենք բանավիճում: Այդ բանավէճերի ժամանակ իրար են բախւում հիմնականում երկու տեսակէտ: Ըստ առաջինի՝ ժողովրդավարութեան բացակայութիւնը Հայաստանում պայմանաւորուած է հասարակութեան զգալի զանգուածի ցածր քաղաքացիական գիտակցութեան մակարդակով: Ըստ երկրորդի՝ պատճառը ներկայիս իշխանութիւնների մօտ ժողովրդավարութիւն ապահովելու համար անհրաժեշտ համապատասխան քաղաքական կամքի բացակայութիւնն է:

Կարծում եմ, որ իրականում երկու տեսակէտներն էլ ճշմարիտ են, սակայն պէտք է նշել, որ դեմոկրատիայի բացակայութեան համար գոյութիւն ունի հիմնական պատասխանատուների յստակ շրջանակ: Դրանք են՝ իշխանութիւնները եւ նաեւ այն մտաւորականները, հասարակական եւ քաղաքական գործիչները, իրաւապաշտպանները եւ այլն, որոնք, շատ լաւ հասկանալով, որ թիւ մէկ պատասխանատուն հենց իշխանութիւններն են, ինչ-ինչ պատճառներով չեն ցանկանում դա հրապարակայնօրէն ընդունել: Այստեղ կը բերեմ մէկ օրինակ ի ապացոյց ասուածին:

Վերջերս, Ա1-ի P.S. հաղորդման ժամանակ, ՀՀ մարդու իրաւունքների պաշտպանը, անդրադառնալով խօսքի ազատութեան խնդրին, յայտարարեց, որ Հայաստանում հեռուստաեթերն ազատ չէ: Կարծում եմ ակնյայտ է, որ հեռուստաեթերի ազատ չլինելը պայմանաւորուած չէ այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են դեմոկրատիային ժողովրդական լայն զանգուածների պատրաստ չլինելը, չինովնիկների կաշառակեր լինելը կամ օլիգարխների ագահութիւնը: Հեռուստաեթերի ազատ լինել-չլինելը կախուած է մի քանի մարդկանցից, որոնք գտնւում են իշխանական բուրգի գագաթին: Կա՞յ մէկը, ով կարող է հերքել սա:

Նշանակում է, որ մեր պետութիւնը չի երաշխաւորում խօսքի ազատութիւնը, որը հանդիսանում է ժողովրդավարութեան կարեւորագոյն յենասիւներից մէկը: Միայն այս հանգամանքը բաւարար է եզրակացնելու, որ սահմանադրական կարգ Հայաստանում գոյութիւն չունի, քանզի չի գործում Սահմանադրութեան հիմնական դրոյթներից մէկը, որն ամփոփուած է Սահմանադրութեան հենց առաջին յօդուածում (ի դէպ, այս յօդուածը փոփոխութեան ենթակայ չէ), ըստ որի, ՀՀ-ն ժողովրդավարական, իրաւական երկիր է: Յիշենք նաեւ, որ ըստ նոյն սահմանադրութեան, գոյութիւն ունի կոնկրետ անձ, որը հանդիսանում է սահմանադրութեան գարանտը՝ դա ՀՀ նախագահն է:

Բայց վերադառնանք մարդու իրաւունքների պաշտպանին: Ցաւօք, պէտք է նշել, որ նա, փայլուն կերպով իմանալով վերոնշեալ հանգամանքներն, այնուամենայնիւ անտեսում է դրանք, եւ խօսում է միայն օրէնսդրական բարեփոխումների անհրաժեշտութեան մասին, որոնք, ըստ նրա, որոշակի ժամանակ անց, միգուցէ, կը փոխեն հեռուստաեթերի հետ կապուած ներկայիս իրավիճակը:

Ո՞րն է այսպիսի դիրքորոշման պատճառը: Հաւանաբար, օմբուդսմենը, ինչպէս եւ որոշ հայաստանեան հասարակական, քաղաքական գործիչներ, համոզուած է, որ մեր հասարակութիւնն ընդհանուր առմամբ պատրաստ չէ ժողովրդավարութեանը, եւ որ իշխանութիւններն էլ իրենց դիրքերը զիջողներից չեն: Այդ իսկ պատճառով վերոնշեալ գործիչներն առաջնորդւում են «չնից մազ պոկելն էլ է քյար» սկզբունքով: Նաեւ համոզուած լինելով, որ տեսանելի ապագայում, միեւնոյն է, լուրջ փոփոխութիւններ հնարաւոր չեն, ձեռնպահ են մնում ողջ ճշմարտութիւնը ներկայացնելուց, որպէսզի հարուածի տակ չդնեն իրենց սեփական, յարաբերական կայուն կեանքը:

Լաւ, պարոնայք, չէ՞ք հաւատում արագ փոփոխութիւնների հնարաւորութեանը, դա ձեր իրաւունքն է: Սակայն ձեր կիսատ ճշմարտութեամբ, սահմանադրական նորմերի խախտումների վրայ աչք փակելով դուք խոչընդոտում էք բոլոր նրանց պետականաստեղծ գործունէութեանը, ով հաւատում է այդպիսի փոփոխութիւնների հնարաւորութեանը: Դուք ձեր պահուածքով համալրում էք ժողովրդավարութեան թշնամիների շարքերը:

«ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹԾԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

# ՀԱՅԱՍՏԱՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՐԵՒԷ ՔԱՅԼԻ ՉԵՆ ԳՆՈՒՄ ԱՌԱՆՑ ՃՆՇՄԱՆ»

*Կալանավայրից Հայոց Համազգային Շարժման Լոռու կառոյցի ղեկավար Աշոտ Մանուկեանի ազատ արձակումը իշխանութիւնների նկատմամբ համաժողովրդական ճնշման արդիւնք է»: «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նման համոզմունք յայտնեց Հայ Ազգային Կոնգրէսի համակարգող Լեւոն Զուրաբեանը:*

*2008 Թուականի յետընտրական իրադարձութիւնների կապակցութեամբ անազատութեան մէջ գտնուող Աշոտ Մանուկեանը անցած Ուրբաթ վաղաժամկէտ ազատ արձակուեց Վանաձորի քրէակատարողական հիմնարկից:*



Հայ Ազգային Կոնգրէսի համակարգող Լեւոն Զուրաբեան

*«Եթէ չլինէր այն հետեւողական պայքարը, չլինէին այն հետեւողական բազմահազարանոց միտինգները, որ տեղի են ունենում արտակարգ դրութիւնից յետոյ, մենք այսօր բանտերում կ՚ունենայինք տասնեակ մարդիկ: Եւ այդպէս էլ շարունակուելու է՝ մենք հանգիստ չենք թողնելու քնել ո՛չ այսօրուայ այս իշխանութիւններին, ո՛չ Եւրոպայի խորհրդի պաշտօնեաներին, ո՛չ Եւրոպական միութեանը, որը Մայիսի 9-ին այստեղ Հայաստանի հետ մարդու իրաւունքների շուրջ երկխօսութեան ֆորմատի շրջանակներում սեմինար է անցկացնելու, եւ այդ օրն էլ ենք մենք պլանաւորել լրջագոյն մի հանրահաւաք եւ պիկետներ», - ասաց Լեւոն Զուրաբեանը:*

*«Բնականաբար, այս ճնշումները իրենց արդիւնքը ունեցել են, Եւրոպայի խորհուրդը այսօր Հայաստանի հարցում կանգնած է ընտրութեան առջեւ՝ կա՛մ վերջնականապէս հեղինակազրկուել, կա՛մ, այնուամենայնիւ, լուրջ քայլեր կատարել՝ պարտադրելու համար Հայաստանի իշխանութիւններին՝ ազատ արձակել քաղբանտարկեալներին: Հիմա, [Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի] Յունուարի նստաշրջանին ընդառաջ, կը լինեն եւ համազեկուցողների պաշտօնական այցելութիւններ Հայաստան», - նշեց Հայ Ազգային Կոնգրէսի համազեկուցողը՝ յաւելելով. - «Այս ամէնը արուելու է մի նպատակով՝ պարզ մի մեսիջ փոխանցելու Հայաստանի իշխանութիւններին, որ այլեւս համբերութեան բաժակը լցուած է, եւ սպառուած է համբերութիւնը»:*

*Վերջերս Երեւանում գտնուող Եւրախորհրդի գլխաւոր քարտուղար Թորբյորն Եագլանդի հետ հանդիպումից առաջ Հայաստանի առաջին նախագահ, Հայ Ազգային Կոնգրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում վստահութիւն էր յայտնել, որ մօտ ապագայում ազատ կ՚արձակուեն անազատութեան մէջ գտնուող մէկ տասնեակից աւելի ընդդիմադիր գործիչները, եւ կարծիք էր յայտնել, որ Եւրախորհուրդը ուժեղացնելու է ճնշումը Հայաստանի իշխանութիւնների վրայ:*

## Ո՞Վ Է ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՅԱՋՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

*«Նոր ժամանակներ» կուսակցութեան առաջնորդ Արամ Կարապետեանն Նոյեմբր 2-ի ասուլիսի ժամանակ, անդրադառնալով առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին, նշեց, որ իշխող ՀՀԿ-ն ամէն ինչ անելու է՝ բոլոր ռեսուրսներն իր ձեռքում պահելու համար: «Դա օլիգոպոլիայի միջոցով իշխանութիւնը պահելու դասական ձեւն է»,- նշեց Կարապետեանը:*



«Նոր ժամանակներ» կուսակցութեան առաջնորդ Արամ Կարապետեան

*Նա նշեց, որ ընտրութիւնների ժամանակ չի բացառւում միաւորումների ձեւաւորումը, իսկ ինչ վերաբերում է «Նոր ժամանակներին», ապա կուսակցութիւնը մնալու է «արմատական ընդդիմութեան կողքին»: Միաժամանակ ՆԺԿ առաջնորդը համոզմունք յայտնեց, որ մինչեւ Հայաստանում համակարգային փոփոխութիւն չլինի, ընտրութիւններով որեւէ բան չի փոխուի երկրում: «Այդ դէպքում ինչո՞ւ էք մնում քաղաքականութեան մէջ» հարցին, ՆԺԿ առաջնորդը պատասխանեց. «Որպէսզի օգտագործենք քաղաքական պահը՝ յեղափոխութիւն անելու համար»:*

*Արամ Կարապետեանը լրագրողներին ներկայացրեց իր ունեցած տեղեկութիւններն այն մասին, թէ ինչ են պատրաստւում անել իշխանութիւնները 2013թ նախագահական ընտրութիւնների ժամանակ: Ըստ Կարապետեանի տեղեկութիւնների, գալիք նախագահական ընտրութիւնների ժամանակ իրեն եւ «ժառանգութեան» առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանին չեն գրանցելու որպէս նախագահի թեկնածու: Փոխարէնը, ըստ ՆԺԿ ղեկավարի, ընդդիմութիւնից ընտրուելու է մի գործիչ, որի հետ պայքարում էլ Սերժ Սարգսեանը յաղթելու է նախագահական ընտրարշաւում:*

*«Ես գիտեմ այդ մարդու անունը, բայց չեմ ասում դեռ, դա Լեւոն Տէր-Պետրոսեանը չէ, դա Ռոբերդ Քոչարեանը չէ: Ընտրուելու է նոր մարդ, նոր, այսինքն քաղաքական դաշտում հին, բայց համեմատաբար, որին որպէս ընդդիմութեան ներկայացուցիչ՝ ապագայում չակերտների մէջ յաղթելու է Սերժ Սարգսեանը»,- յայտարարեց Արամ Կարապետեանը՝ նշելով, որ այդ անձը Արթուր Բաղդասարեանն էլ չէ:*

## ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿԵԱՆ.- «ԱՌԱՆՑ ՂԱՐԱԲԱՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՉ ՄԻ «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԷԶ» ՉԵՆՔ ՍՏՈՐԱԳՐԻ ԱՍՏԱՆԱՅՈՒՄ»

*«Մենք մեր դիրքերը չենք զիջելու եւ առանց Ղարաբաղի կարգավիճակի ոչ մի ճանապարհային քարտէզ չենք ստորագրի»,- այսօր՝ Նոյեմբերի 2-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նման տեսակէտ յայտնեց Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Գալուստ Սահակեանը, մեկնաբանելով Աստանայում Դեկտեմբերի 1-2-ին ԵԱՀԿ գագաթաժողովում Ղարաբաղի խնդրի վերաբերեալ ճանապարհային քարտէզ ստորագրելու հաւանականութեանը: «Ճանապարհային քարտէզն» ընդամէնը փափուկ բառ է, իսկ մեզ համար նախեւառաջ Ղարաբաղի կարգավիճակն է կարեւոր»,- ընդգծեց նա, յաւելելց. «ՀՀԿ-ն կը համաձայնի անգամ ճանապարհային քարտէզին, եթէ Ղարաբաղի կարգավիճակն այնտեղ լինի»:*

*Յիշեցնենք, որ նման հաւանականութեան մասին խօսել էր ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը՝ Հոկտեմբերի 27-ին Աստրախանում Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների եռակողմ հանդիպումից յետոյ:*

*Լրագրողները հետաքրքրուեցին նաեւ, թէ ինչո՞ւ են ԱԺ-ում փակել YouTube կայքը, ինչին ՀՀԿ փոխնախագահն արձագանքեց. «Ես չեմ կարծում, որ YouTube-ին հակազդելու իրական երաշխիքներ կան: Մենք պիտի կարողանանք իրականութիւնն ու զրպարտանքը տարբերակել իրարից: Դրանք քարոզչական մեքենաներ են, որ փորձում են թուլացնել Հայաստանը»: Նա նաեւ նշեց, որ ինքը տեղեակ չէ, թէ ինչու են ԱԺ-ում փակել այդ կայքը:*

## ԴԱՏԱՐԱՆԸ ԳՐԱՒԻ ԴԻՄԱՑ ԱԶԱՏ Է ԱՐՁԱԿԵԼ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ՍՊԱՆԵՐԻՆ

*Անցած շաբաթավերջին դատարանի որոշմամբ գրաւի դիմաց ազատ են արձակուել Արարատի մարզի Վազգէն Սարգսեանի անուան զօրամասի գումարտակի հրամանատար Վարդան Մարտիրոսեանը (մականունը՝ Ռոժ) եւ գնդի հրամանատարի անձնակազմի հետ տարուող աշխատանքների գծով տեղակալ Արթուր Կարապետեանը: Նրանց նկատմամբ, խափանման միջոց էր ընտրուել կալանքը:*

*Այս տեղեկութիւնը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում հաստատեցին Պաշտպանութեան նախարարութեան քննչական վարչութիւնից, որն իրականացնում է սպաների նկատմամբ դրամաշորթութեան եւ պաշտօնական լիազօրութիւնները չարաշահելու մեղադրանքով յարուցուած քրէական գործի նախաքննութիւնը:*

*Վարդան Մարտիրոսեանը, ըստ մեղադրանքի, ստիպել էր զինծառայողներին իրենց անուններով վարկեր վերցնել, սակայն զինուորները չէին կարողացել դրանք վերադարձնել: Իրականութիւնը պարզուել էր եւ գումարներ հաւաքող հրամանատարը ձերբակալուել էր: Իսկ Արթուր Կարապետեանը զինուորներից շորթել էր մօտ 1 միլիոն դրամ՝ հրամանատարի համար համակարգիչ գնելու համար:*

*Ըստ «Ժամանակ» օրաթերթի, Վարդան Մարտիրոսեանն ազատ է արձակուել 1 միլիոն դրամ, իսկ Արթուր Կարապետեանը՝ 820 հազար դրամ գրաւի դիմաց:*

*«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրուցում մեկնաբանելով սպաներին գրաւի դիմաց ազատ արձակելը՝ իրաւապաշտպան Արթուր Սաքունցը ասաց. - «Նման դէպքերը տեղի են ունենում, երբ որ կայ սուբիեկտիւ շահագրգռուածութիւն: Հաշուի առնենք, որ նրանք հանդիսանում են Զինուած ուժերի գլխաւոր շտաբի պետի՝ Խաչատուրովի տղայի ընկերները եւ գործընկերները: Եւ բնականաբար, անպայման գործի շրջանակներում պէտք է հարց բարձրանայ, թէ ինչքանով է մասնակից եղել գնդի հրամանատարը՝ Խաչատուրովի տղան»:*

*Սաքունցի համոզմամբ, յայտնուելով ազատութեան մէջ Մարտիրոսեանն ու Կարապետեանը կը կարողանան անձամբ ճնշում գործադրել իրենց դէմ վկայութիւն տուած զինուորների վրայ:*

*«Անպայման նրանց վրայ կը կատարուեն որոշակի այսպէս կոչուած՝ մշակման կամ համոզելու աշխատանքներ, որպէսզի նրանք հրաժարուեն իրենց բողոքներից եւ ցուցմունքներից», - ասաց Սաքունցը:*

## ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ-.«ՀԱՅԱՍՏԱՆ ՉԻ ԿԱՐՈՂ ԽԻՍՏ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼ ԻՐԱՆԻ ԴԷՄ»

*Հայաստանը կ՚անի ամէն ինչ, որպէսզի պահպանի բարիդրացիական յարաբերութիւնները Իրանի հետ, խորացնի եւ ընդլայնի դրանք: Այս մասին յայտարարել է Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեանը, հանդէս գալով ԱՊՀ երկրների մեդիա-ֆորումի մասնակիցների առջեւ:*

*«Մեր քաղաքականութիւնը շատ բաց է. լինելով փոքր երկիր, մենք բաց ենք մեր ռուսական, ամերիկեան, եւրոպական ու իրանական գործընկերների առաջ: Մենք ամէն տեղ բաց ասում ենք նոյն բանը եւ մեր դիրքորոշումներն այդ առումով յստակ ու պարզ են: Մենք անելու ենք ամէն ինչ, որպէսզի պահպանենք բարիդրացիական յարաբերութիւնները Իրանի հետ, խորացնենք եւ ընդլայնենք դրանք»,- ասել է նա:*

*Տիգրան Սարգսեանը նշել է, որ դա Հայաստանի կենսական շահերից է բխում եւ որ Հայաստանն այլ ելք ու ընտրութիւն չունի:*

*«Ուստի շատ խիստ մեխանիզմները, որն առաջարկւում է կիրառել Իրանի հանդէպ, մենք, իհարկէ, չենք կարող մեզ թոյլ տալ:*

Շար.ը էջ 5

# ԼՈՒՐԵՐ

## ԴԱՎՈՒԹՕՂԼՈՒՆ ՎՍՏԱՀ Է՝ ՎԱՇԻՆԳՏՈՆՆ ԱՆԿԱՐԱՅԻ ԴԷՄ ՉԻ ՕԳՏԱԳՈՐԾԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ «ԽԱՂԱԹՈՒՂԹԸ»

*Միացեալ Նահանգները Թուրքիայի դէմ հակահրթիռային պաշտպանութեան տարրերի տեղակայման հարցում չի օգտագործի Հայոց ցեղասպանութեան «խաղաղթուղթը»: Այս մասին, թուրքական լրատուամիջոցների փոխանցմամբ, յայտարարել է Թուրքիայի արտգործնախարար Ահմէթ Դավութօղլուն՝ անդրադառնալով թուրքական մամուլում շրջանառուող այն տեղեկութեանը, ըստ որի՝ ԱՄՆ Կոնգրէսը կը ճանաչի Հայոց ցեղասպանութիւնը, եթէ Թուրքիան հրաժարուի իր տարածքում տեղակայել ամերիկեան հակահրթիռային պաշտպանութեան տարրեր:*

*«Նման բան չկայ: Մեր դէմ դաշնակից եւ բարեկամ երկիրը երբեք որեւէ թէմա որպէս խաղաղթուղթ չի օգտագործել եւ չի օգտագործելու: Դա հակասում է դաշնակից հասկացութեանը»,- յայտարարել է Դավութօղլուն:*



Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմէթ Դավութօղլու

*Յիշեցնենք, որ օրեր առաջ Hurriyet Daily News պարբերականը, վկայակոչելով անանուն աղբիւրներ, գրել էր, որ Վաշինգտոնն Անկարային դիւանագիտական խողովակներով ուղերձ է յղել այն մասին, որ եթէ Անկարան մերժի Միացեալ Նահանգների՝ Թուրքիայի տարածքում ՀՀՊ տարրեր տեղակայելու առաջարկութիւնը, ապա Կոնգրէսը կ՚ընդունի Հայոց ցեղասպանութեան մասին բանաձեւը:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է ՆԱՏՕ-Ի ԽՎ-ՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԵԼԻՔ ԲԱՆԱՁԵՒՈՒՄ ԱՌԿԱՅ ՁԵՒԱԿԵՐՊՈՒՄԸ

*ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովում հայաստանեան պատուիրակութեան ղեկավար, հանրապետական Կարէն Աւագեանի խօսքով, Հայաստանի համար անընդունելի է առաջիկայում վեհաժողովի քննարկմանը ներկայացուելիք բանաձեւում առկայ «եօթ շրջանների օկուպացիա» ձեւակերպումը:*

*«Ի սկզբանէ պրոցեդուրան սխալ է գնացել», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Աւագեանը, - «քննարկումը պայմանաւորուածութեան արդիւնք է, որը եղել է յանձնաժողովի նիստերից դուրս»:*

*Նոյեմբերի 12-16-ը Վարշաւայում կայանալու է ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի 56-րդ նստաշրջանը: Նստաշրջանում շրջանառութեան մէջ է դրուելու Կանադան ներկայացնող պատգամաւոր Ռայնլ Անդրեյչուկի հեղինակած 6-կէտանոց բանաձեւի նախագիծը, ուր, մասնաւորապէս, կայ այսպիսի ձեւակերպում. - «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ հակամարտութիւնը եւ նախկին ինքնավար մարզին յարակից եօթ շրջանների օկուպացիան տարածաշրջանի ժողովրդի համար նշանակալի տառապանքների պատճառ են հանդիսացել»:*

*Պաշտօնական Երեւանը պնդում է, որ դեռեւս Մայիսին Ռիգայում կայացած ՆԱՏՕ-ի Խորհրդարանական վեհաժողովի ընթացքում ադրբեջանական պատուիրակութիւնը առանձին հանդիպում է ունեցել վեհաժողովի նախագահ Ճոն Թաների հետ եւ վերջինիս առաջարկել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան վերաբերեալ պատրաստել յատուկ մի զեկոյց ու այն քննարկել վեհաժողովի աշնանային նստաշրջանում: Սակայն այդ մասին հայկական կողմը իմացել է միայն մէկ ամիս անց:*

## ՀՀԿ-Ը ՕՐԷՆՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՄ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

*Անվճար բուժօգնութիւն, բարեգործական համերգ, բարեգործական այց, մանկապարտէզի, գիշերօթիկ դպրոցի, մանկատան, ծերանոցի, բակային ճամբարի հովանաւորում, դիմակահանդէս, «ուսանողական գարուն», ուխտագնացութիւն, մրցանակաբաշխութիւն, «բացէական» հաւաքներ, փառատօններ, էլիտար խաղեր, սպորտային մրցումներ, «սեմինարներ» հանգստեան գօտիներում եւ նման միջոցառումներ կազմում են ՀՀԿ հիմնական գործունէութիւնը:*

*Պետական հսկայական միջոցների հաշուին իրականացուող «կուսակցական» այդ գործունէութիւնը, որը մերթ ընդ մերթ աւարտւում է կուստոմսերի յանձնմամբ, իրականացւում է նաեւ բուհերում եւ զօրամասերում:*

*ՀՀԿ-ական եւ կոալիցիոն պաշտօնեաները ոչ միայն չեն կանխում, այլ՝ իրենց ծառայողական դիրքն անթաքոյց օգտագործում են յօգուտ կուսակցական շահերի, այս աննախադէպ զանգուածային խախտումների նախաձեռնման եւ իրականացման գործում, մասնաւորապէս՝ ՀՀ վարչապետը, Նախագահի աշխատակազմի ղեկավարը, Երեւանի քաղաքապետը, նախարարներ, մարզպետներ, ռեկտորներ:*

*Բանը հասել է նաեւ նրան, որ Պաշտպանութեան նախարարը նորից ներգրաւուում է ՀՀԿ գործունէութեան մէջ: Յիշենք նաեւ, Սահմանադրական դատարանի նախագահի մասնակցութիւնը ՀՀԿ արտաքին քաղաքականութեան քարոզչութեան գործում:*

*Այսինքն, պետական հնարաւոր ներուժն այսօր ուղղուած է ՀՀԿ նախընտրական հզօրացմանը, որի անվերահսկելիութեան համար, կարծես, շատ յարմար պայմաններ են ստեղծել՝*

*1. Քաղաքական ուժերի մի մասին զբաղեցրել են մարտիմէկեան հետեւանքների վերացման անարդիւնք գործով, միւսին՝ հայ-թուրքական յարաբերութիւնների մասին անպտուղ խօսակցութիւններով, երրորդին՝ ընտրական օրէնսգրքի հերթական «յուսադրող» նախագծով,*

*2. իսկ ժողովուրդը տառապում է օրէցօր աճող գներից եւայլն:*

*ՀՀԿ ապօրինութիւնների սանձահարման համար, հրատապ անհրաժեշտութիւն է դարձել միջոցներ ձեռնարկել, որ միջազգային կառոյցները՝*

*1. պահանջեն Ս. Սարգսեանի հեռացումը ՀՀԿ ղեկավարի համատեղման պաշտօնից, որի օրինակն արդէն իրականացուել է Եւրոպայում,*

*2. ՀՀԿ ներկայ գործունէութեանը տան փորձագիտական գնահատական, որի արդիւնքում պետական այդ բարեգործական կազմակերպութիւնն իրաւունք չի ունենայ մասնակցել առաջիկայ ընտրութիւններին:*

*Այս նպատակով, սոյն յայտարարութիւնը ներկայացնում ենք ԵՄ, ԵԽ, ԵԱՀԿ հայաստանեան գրասենեակներին եւ այդ կառոյցների անդամ-երկրների դեսպանատներին, իսկ Դեկտեմբեր ամսին «Ընդդէմ ՀՀԿ ապօրինութիւնների» համահայկական կազմակերպութեան շրջանակներում կը կազմակերպուի համացանցային քննարկում:*

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԿԵՆՏՐՈՆ /ՀՊԱԿ/ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ԹՈՐՈՍԵԱՆ***

## ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԸ ՅԱՂԹԱԿԱՆ

**Շարունակուած էջ 1-էն**

*ծուները հասան յաջողութիւններու: Կառավարիչի պաշտօնին համար մղուող ընտրապայքարին մէջ յաղթական դուրս եկաւ նախկին կառավարիչ Ճէրի Պրաուն, որ պարտութեան մատնեց Հանրապետական Մէկ Ուիթմընին: Դեմոկրատ Պարպարա Պոքսըր յաջողեցաւ պահել Ծերակոյտի իր աթոռը, յաղթելով Հանրապետական Քարլի Ֆիորինային:*

*Վերընտրուեցան նաեւ Հայահոծ քաղաքները ներկայացնող գոնկրէսական Ատէմ Շիֆ եւ Նահանգային Խորհրդարանի անդամ Մայք Կաթօ:*

## ԹՈՒՐՔԵՐԸ ԱՆՀԱՆԳՍՏԱՑԱԾ ԵՆ ՍՈՉԻՈՒՄ ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՓԱՍՏԻՑ

*Սոչիի Լազարեւեան շրջանում Արեւմտեան Հայաստանի ազգային ազատագրական շարժման մասնակից, Զօրավար Անդրանիկ Օզանեանի յուշարձանի տեղադրումը խիստ արձագանք է գտել թուրքական մամուլում:*

*Թուրքիայում անհանգստացած են, որ իրենց բարեկամ Ռուսաստանում տեղադրւում է Առաջին Համաշխարհայինի տարիներին թուրքերի գլխին մեծ փորձանքներ բերած հայազգի զօրավարի արձանը:*

*Թուրքական գրեթէ բոլոր լրատուամիջոցներում տեղադրուած հրապարակումների մէջ Զօրավար Անդրանիկը մեղադրւում է թուրքերի ճնշումներին չենթարկուելու եւ որպէս պատասխան հազարաւոր թուրքերի կոտորելու մէջ:*

*Նշենք, որ Ռուսաստանի հայերի «Երկրամաս» թերթը տեղեկացրել է, որ Զօրավար Անդրանիկ Օզանեանի արձանը տեղադրուելու է Սոչիի Լազարեւեան շրջանում:*

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ԿԸ ՅԱՆՁՆԵՆ

**Շարունակուած էջ 1-էն**

*Հայաստանի առաջին նախագահը վստահեցուցած է, որ անհրաժեշտութեան պահուն համակիրներու բանակը կու գայ եւ շատ աւելի մեծ կը դառնայ, քան 2008 թուականին:*

*Յիշեցնենք, որ օրեր առաջ Լ. Տէր-Պետրոսեան վստահութիւն յայտնած էր, որ մօտ ապագային ազատ կ՚արձակուին բանտերու մէջ գտնուող մէկ տասնեակէ աւելի ընդդիմադիր գործիչները, եւ որ Եւրախորհուրդը պիտի ուժեղացնէ ճնշումը Հայաստանի իշխանութիւններուն վրայ: Այդ յայտարարութենէն մի քանի օր ետք, բանտէն ազատ արձակուեցաւ ՀՀՇ կուսակցութեան Լոռիի կառոյցի ղեկավար Աշոտ Մանուկեան:*

*Այս առթիւ շնորհաւորելով Աշոտ Մանուկեանին ու անոր ընտանիքին, Լեւոն Տէր-Պետրոսեանը կրկին յայտարարած է, որ իրենց գաղափարակիցներու ազատ արձակումը կը կը շարունակուի:*

## ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ԵՆ ԵՐԿՈՒ ՀԱՅԵՐ

**Շարունակուած էջ 1-էն**

*Գէորգեան Ասլան Աբաշիձէի իշխանութեան տարիներուն Աճարիայի հայ համայնքի ղեկավարը եղած է:*

*«Ճորճիըն Թայմզ» թերթը իր կարգին կը տեղեկացնէ որ, Շիկոյեան եւ Գէորգեան կը մեղադրուին Ռուսաստանի մէկ քաղաքացիէն գումար ստանալու մէջ: «Ենթադրաբար, այդ ռուսաստանցին հետախուզութեան աշխատակից եղած է», - կը յայտնէ թերթը:*

*Վրացական աղբիւրները նաեւ կը տեղեկացնեն, որ ըստ հետաքննող մարմիններուն, ձերբակալուածներուն յանձնարարուած էր տեղեկութիւններ հաւաքել Վրաստանի ներքին գործերու եւ պաշտպանութեան նախարարութիւններու կողմէ կատարուող գնումներու, ինչպէս նաեւ ուժային կառոյցներու աշխատակիցներու անձնական տուեալներու մասին: Վրաց իրաւապահները խոստացած են գործի մանրամասնութիւնները հրապարակել Նոյեմբեր 5-ին:*

*Հայկական որոշ աղբիւրներ կը յայտնեն, որ երկու հայերը անդամ են «Ջաւախք» ժողովրդական շարժման, սակայն Շարժումի նախագահ Նորիկ Կարապետեան, «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է թէ, Արմէն Գէորգեան եւ Ռուբէն Շիկոյեան իր ղեկավարած կազմակերպութեան անդամներ չեն:*

*Ռուսական կողմը առայժմ լռութիւն կը պահէ կատարուածի մասին: Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերգէյ Լաւրովը յայտարարած է թէ, քանի որ ձերբակալուածները Վրաստանի քաղաքացիներ են, ապա աւելի տրամաբանական է դիմել պաշտօնական Թբիլիսիին՝ պարզաբանումներ ստանալու համար:*

# ԼՈՒՐԵՐ

## ՀԸԶՊԱԼԼԱ ՊԱՏՐԱՍՏ Է ԳՐԱՒԵԼՈՒ ԼԻԲԱՆԱՆԸ

*«Ալ Շարք Ալ Աուսաթ» թերթին համաձայն շիիները՝ համագործակցութեամբ այլ տարրերու, պատրաստ են գրաւելու Լիբանանը: Անոնք այս նախապատրաստութիւն կը տեսնեն հակազդելու համար Ռաֆիք Հարիրիի սպանութեան հարցով միջազգային դատական ատեանի դատավճիռի հրապարակումին: Այս առթիւ Հըզպալլա կուսակցութեան բանբեր մը իր գայրոյթը յայտնած է միջազգային ատեանին, լիբանանցի կարգ մը կանանց վրայ կատարած հարցաքննութեանց համար, զանոնք նկատելով անտեղի:*

*Նշենք նաեւ որ Լիբանանի նախարարաց խորհուրդը յետաձգեց Հարիրիի հարցով «կեղծ վկայութիւններ» կատարողներու հարցի քննարկումը:*

## ԱՆԳԼԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԶՕՐԱՎԻԳ ԿԸ ԿԱՆԳՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ

*Լոնտոն. Բրիտանիոյ վարչապետ Տավիտ Գամերօն պաշտօնական յայտարարութիւն մը կատարելով յայտնեց թէ իր երկիրը զօրավիգ կը կանգնի Լիբանանի կառավարութեան: Արդարեւ, ան այս յայտարարութիւնը կատարեց Լիբանանի վարչապետ Սաատ էլ Հարիրիին վերջերս Լոնտոն կատարած երկօրեայ այցելութեան աւարտին:*

## ԼԻԲԱՆԱՆԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԶԱԶՐԵԼԻ ԱՐԱՐՔ ՄԸ

*Անցեալ Շաբաթ Պաղտատի արուարձաններէն մէկուն մէջ գտնուող «Սաիտաթ Ալ Նաժաթ» եկեղեցիին վրայ ահաբեկչական ահաւոր յարձակում մը տեղի ունեցաւ: Այս արարքին զոհ գացին տասնեակ մը անմեղներ, որոնք եկած էին ներկայ գտնուելու կիրակնօրեայ պատարագին: Այս առթիւն Լիբանանի մարօնիթ համայնքի ղեկավարները խստօրէն դատապարտեցին արարքը:*

## ԼԻԲԱՆԱՆՑԻ ԼՐՏԵՍՆԵՐ ՄԱՀՈՒԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱՆ

*Լիբանանի զինուորական դատարանը երեք լիբանանահպատակներուն դէմ մահավճիռ արձակեց: Անոնք ի բացակայութեան մահուան դատապարտուեցան եւ ամբաստանուած են Իսրայէլի ի նպաստ լրտեսութիւն կատարած ըլլալու յանցանքով: Ամբաստանեալները երկրէն դուրս փախած են: Անոնցմէ Ժաուտաթ էլ Հաքիմ Իսրայէլի ի նպաստ կը գործէր 1999էն ի վեր: Ենթակաները կրնան վերաքննութիւն պահանջել գերագոյն ատեանի մօտ:*

---

## «ԱՊԷ, ՊԷՏՔ Ա՞ ԽԱՌՆՈՒԵ՞ՆՔ»

*Շարունակուած էջ 2-էն*

*րով արդէն իսկ Թոշակ ստացողների համար այնպիսի պայմաններ ստեղծել, որ Թոշակի պատրաստուողները Թոշակ բառից անգամ վախենային: Տես, թէ Հայաստանում ինչ է կատարւում: Որ խաւն էլ վերցնես, ուսուցիչ լինի, ինժեներ, շինարար, գրադարանավար, լրագրող, նախարար, պատգամաւոր կամ հարկային տեսուչ, Թոշակի անուն չի ուզում լսել: Նրանց ասա, որ Թոշակի տարիքը ոչ թէ 62-ն է, այլ 82-ը: Կը բողոքե՞ն: Զեն բողոքի, ուրախութիւնից կը Թռվռան: Իսկ Ֆրանսիայում բողոքում են: Ինչո՞ւ: Թոշակառուներին շատ էք երեւ տուել: Վատ էք աշխատում տեղական բազայի վրայ, շատ վատ, կ'ասէր մեր թերթերից մէկի հանճարեղ խմբագիրը, ով պատրաստւում էր դրական յօդուած գրել ՀՀ այն ժամանակուայ շրջաններից մէկի՝ Իջեւանի կրթութեան ոլորտի ղեկավարների մասին, բայց պատահաբար իմացել էր, որ ճոխ սեղանը սպասարկող ուսուցչուհիները, բացառութեամբ մէկ-երկուսի, շարունակում են կոյս մնալ:*

*Եթէ, այնուամենայնիւ, խռովութիւնները դադարեցնելու համար, եւրոպական երկրներից որեւէ մէկում, իսկ մեզ ամենասրտամօտը Ֆրանսիան է, ցանկութիւն առաջացաւ օգտուել ՀՀ իշխանութիւնների անշահախնդիր այս օգնութիւնից, ապա խնդրում ենք նախապէս առաջին պատրաստութեան բերել Եւրամիութեան բոլոր առողջապահական հիմնարկներն ու առաջին օգնութեան ծառայութիւնները: Ինչքան չլինի՝ կառավարման փորձը հայկական է, իսկ ձեր ժողովուրդը՝ եւրոմիութենական: Մի բան չպատահի՞:*

*Յ.Գ. Հա, քիչ մնաց մոռանայի: Պարոն Սարկոզի, ձեզ Մարսէլից Փարիզ ճոպանուղի պէտք չէ՞: Հարց չկայ, կը կառուցենք: Դա նոյնպէս ժողովրդի վրայ դրական (հնազանդեցնող) ազդեցութիւն է թողնում:*

*«7 ՕՐ»*

---

## ՀԱՅԱՍՏԱՆ ՉԻ ԿԱՐՈՂ

*Շարունակուած էջ 3-էն*

*Մենք շատ կարեւոր նշանակութիւն ենք տալիս նրան, թէ ինչ գործընթացներ են գնում Իրանում: Մենք մտավախութիւն ունենք, որ այդ նաւակը չի կարելի ճօճել, քանի որ Իրանում իշխանութեան ղեկին գտնուող վարչակազմը ապահովում է իր երկրի կայունութիւնը. Մի երկրում, որտեղ ազգային կազմն ունի իր առանձնայատկութիւնները»,- ընդգծել է ՀՀ վարչապետը:*

*Նա նշել է, որ եթէ Իրանում իշխանութեան լինի ոչ թէ այս վարչակազմը, այլ մէկ ուրիշը, ապա «մենք կ'ունենանք լուրջ բացասական գործընթացներ տարածաշրջանում, որոնք կ'ազդեն ողջ աշխարհի իրավիճակի վրայ»:*

## ԿՈՉ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔԻ, Ա1+Ի ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Վերջերս մամուլում «Ժողովրդական Հեռուստատեսութիւն» հիմնադրամի մամլոյ դիւանը յայտարարութիւն էր տարածել այն մասին, որ Հոկտեմբերի 28-ին բացուելու է թիւ 11 լրատուական ուղղուածութեան հեռուստաալիքի համար ներկայացուած մրցութային փաթեթները: Հենց այս մրցոյթին է մասնակցում «Ա1+» հեռուստաընկերութիւնը, որն իր փաթեթին կից պատրաստւում է ներկայացնել նաեւ հանրութեան քուէները: «Ժողովրդական Հեռուստատեսութիւն» հիմնադրամը նախաձեռնել էր քուէարկութիւնը՝ խորհրդանշական նուիրատուութեան տեսքով: Հիմնադրամը յայտարարել էր, որ կարեւորը ոչ թէ գումարն է, այլ մեր մասնակցութիւնը, որը ըստ էութեան լինելու է մեր քուէն Ժողովրդական ալիքի՝ մեր հեռուստա-ընկերութեան համար:

Այն որ «Ա1+»-ը միակ հեռուստաալիքն է, որ ծառայում է Հայ հանրութեանը, Հայաստանի պետականութեան կայացմանը, մեր երկրում ժամանակակից աշխարհի արժեհամակարգի ձեւաւորմանն ու հաստատմանը, քաղաքացիական հասարակութեան կայացմանը ապացուցուած է մեր երիտասարդ անկախ պետութեան քսանամեայ պատմութեան ընթացքում: «Ա1+» անկախ հեռուստաընկերութիւնը յայտ է ներկայացրել վերստին եթեր վերադառնալու՝ հակառակ 2002թ Ապրիլի 2-ից մինչ օրս 12 անգամ ՀՌԱՀ-ի (Քաղաքական իշխանութիւնների կամակատարի) կողմից մերժուած լինելու փաստի: «Ա1+»-ն մասնակցում է լրատուական-վերլուծական ուղղուածութեան հեռուստաալիքի արտօնագրի մրցոյթին՝ որպէս ծանրակշիռ փաստարկ ունենալով շուրջ 20 տարուայ աշխատանքային փորձը, վարկանիշը, եւրադատարանի վճիռը, ինչպէս նաեւ հանրութեան աջակցութիւնը:

Մենք միանշանակօրէն միանում ենք հիմնադրամի նախաձեռնութեանը եւ կոչով դիմում Հայ համայնքին, ինչպես որ հիմնադրամն է առաջարկում, թէկուզ եւ մէկ տոլարով քուէարկելու «Ա1+»-ի օգտին: Յիշեցնում ենք, որ գումարները (Ձեր քուէները) կարող էք փոխանցել՝

Intermediary Bank DEUTSCHE BANK TRUST COMPANY AMERICAS
NEW YORK, USA
SWIFT: BKTRUS33
ABA: 021001033
Beneficiary Bank
CJSC ''AREXIMBANK- GAZPROMBANK GROUP''
Yerevan, Armenia
SWIFT: RKASAM22
Beneficiary Meltex LTD
01250350101

Նախաձեռնութեանը մասնակցելու խնդրում տեխնիկական օգնութիւն առաջանալու դէպքում կարող եք զանգահարել մեր ընկերութեանը (424) 264-9205 հեռախօսահամարով կամ գրել freearmenia2008@yahoo.com.

**Հայ Քաղաքացիական Հասարակութիւն**
**Մարդու Իրաւունքների Պաշտպանութեան Ընկերակցութիւն**

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## ԱՆՑԵԱԼԻՑ ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՆ

# ՀՈԿՏԵՄԲԵՐ 30, 1920: 90 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԱՅՍ ՕՐԸ ԿՈՐՑՐԻՆՔ ԿԱՐՍԸ

*ԳԷՈՐԳ ԽԱԶՐՃԵԱՆ,*
*Պատմ. գիտ. թեկնածու*

Խ.Ծ. Հանոյթով «Ազգ» էն փոխ յապաւումներով կ'արտատպենք Պատմական գիտութիւններու թեկնածու՝ Գէորգ Խազրճեանի մեծ շահեկանութիւն ներկայացնող, նաեւ՝ շրջահայեցութեամբ գրուած ներկայյօդուածը: Յարգելի յօդուածագիրը գիտականօրէն իր քննարկման առարկան կը դարձնէ Կարսի անկման եղերական պատճառները: Պատասխանատուութիւններու ճշդման բաժնով, շօշափելի տոկոս մը:

Խազրճեան յանցանքը անարդարօրէն կը բեռցնէ նաեւ հայ ժողովուրդի ուսերուն, առանց յականէ մերկացնելու գլխաւոր պատասխանատուները:

Յամենայնդէպս, պատմութիւնը ճշդած այդ:

Հպանցիկ նշենք նաեւ, որ չենք բաժներ իր համոզումները՝ ՀՀ բանակի հրամկազմի ապազգային նկարագրի, ինչպէս նաեւ Ա. Հանրապետութեան կործանման հիմնական պատճառներէն մէկը հայոց լեզուի նկատմամբ անարգական վերաբերմունքի ցուցաբերման մասին:



*Կարսի անկումից ընդամէնը մէկ ամիս յետոյ ընկաւ նաեւ Հայաստանի առաջին հանրապետութիւնը: Եւ դա բնական էր. այդ մէկ ամսուայ ընթացքում թրքական զօրքն ու նրան ուղեկցող քիւրդ բաշիբոզուկները համարեա առանց լուրջ դիմադրութեան հանդիպելու գրաւել էին նաեւ Ալեքսանդրապոլը եւ հանրապետութեան հիւսիսարեւմտեան շրջանի մեծագոյն մասը: Այդ ամսուայ ընթացքում եւ մինչեւ դրանց պարպումը 1921 թ. գարնանը՝ նրանք այդ տարածքում թողեցին «այստեղից թուրքն է անցել» թեւաւոր խօսքին համահունչ անհամար հետքեր... Այդպէս է լինում, երբ դիմադրելու եւ ի հարկին զէնքը ձեռքին պատուով մեռնելու փոխարէն յանձնւում ես թշնամու, այն էլ՝ թուրքի նմանի ողորմածութեանը: Բաւարար է ասել, թէ գերութեան եւ սորկութեան մէջ բազմապատիկ աւելի հայեր (մեծ մասամբ՝ կենսունակ տարիքի տղամարդիկ) են մահացել, քան 1920 թ. աշնանային հայ-թրքական պատերազմի ողջ ընթացքում...*

*Ինչո՞ւ ընկաւ Կարսը, եւ ո՞վ կամ ովքե՞ր են մեղաւոր համազգային այս մեծ **ԱՄՕԹԻ** եւ **ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ** համար, որի հետեւանքները կրում ենք առ այսօր:*

*Բերդաքաղաքի անկումից յետոյ շատերն են տուել այս հարցումները եւ փորձել պատասխանել: Ամէն մէկը փորձել է մեղքը բարդել ուրիշ(ներ)ի վրայ, մասնաւորաբար՝ օտարների. ինչ պատճառ ասես, որ չի առաջադրուել՝ է՛լ միլլիական-բոլշեւիկեան զինակցութիւն-դաւադրութիւն, է՛լ հայազգի բոլշեւիկների խափանարարական աշխատանք յատկապէս ՀՀ բանակում, է՛լ դաշնակից պետութիւնների դաւաճանութիւն...ՀՀ որեւէ պատասխանատու ղեկավար ինքնաքննադատութեամբ չի խոստովանել իր մեղքը, առաւել եւս՝ ապաշխարել իր գործած ծանրագոյն եւ աններելի յանցանքի՝ հայրենիքի տարածքները թշնամուն անարգաբար թողնելու համար: Իսկ եթէ չկայ անկեղծ ապաշխարութիւն (այսինքն՝ մեղքի գիտակցում, զղջում եւ դա չկրկնելու վճռական կամք), յանցանքը մեծ հաւանականութիւն ունի կրկնուելու: Վերջին միտքը ինձ սարսափեցնում է, քանի որ մեր օրերում, մեր այս ընթացքով, նման վերջնական կործանումը ոչ միայն բացառուած չէ, այլեւ...*

*Կարսի անկման ականատեսների կամ այդ մասին անմիջական աղբիւրներից տեղեկացուածների (Արտաշէս Բաբալեան, Գարեգին Արք. Յովսէփեանց, Կարօ Սասունի, Սիմոն Վրացեան, Վահան Արծրունի, Եղիշէ Պահլաւունի, Արտաշէս Ալեքսանդրեան եւ այլք) բոլոր յուշագրութիւններում մեղքը վերոյիշեալների վրայ է բարդւում: Սեփական կոպիտ սխալների մասին ինչ-որ չափով գրում են մարտական գործողութիւնների մասնակից Հայ Գնդունին (Համբարձում Թոփչեան) եւ Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանը (վերջինիս յուշագրութիւնը անտիպ է եւ պահպանւում է Հայաստանի Ազգային արխիւում):*

*Մեր համոզմամբ՝ Կարսի եւ դրան յաջորդած ՀՀ անկման համար առաջին մեղաւորը մենք ենք՝ հայ ժողովուրդը: Լիովին համաձայն ենք Գարեգին Նժդեհի գնահատականին. «Ընդունել ճշմարտութիւնը հանրապետական բանակի անյաջողութեանց մասին, պարզել Կարսի անկման իսկական պատճառները կը նշանակի պատասխանատուութեան բաժին ընդունել»: Նժդեհը յայտարարում է. «Կարսի ամօթը Հ. Հանրապետական կառավարութեանը չէ միայն, այլ ողջ հայ ժողովրդի: Զափւում են, բախւում են բանակները, բայց յաղթում կամ պարտւում են ազգերը, ցեղերը: Կարսի պատերի տակ պարտուողը հայ զինուորն ու զօրավարը չէին միայն, այլ բովանդակ հայութիւնը, հայ ժողովրդի՝ իր ամբողջութեան մէջ անմարտունակ, անարի, անմշակ հոգին: Ահա՛ ճշմարտութիւնը, հա՛յ երիտասարդ...» (Գ. Նժդեհ, «Հատընտիր», Երեւան, 2001, էջ 86): Նոյնը հաստատում է նաեւ Հայ Գնդունին. «Բանակները իրարու դէմ պատերազմելու ատեն հոգեկան ձիրքե՛րն են որ կը չափուին երկու կողմերուն կամ թշնամիներուն միջեւ, ամեն բանէ աւելի» (Հայ Գնդունի, «Կարսի անկումին պատճառները», «Մարտկոց» թերթ, Փարիզ, 1932 թ., 10 նոյեմբերի, էջ 2»:*

*Թէ՛ անձնական եւ թէ՛ հաւաքական կեանքում վերելքներին եւ անկումներին նախորդում են բարոյահոգեբանական դրական կամ բացասական երեւոյթները: Վերջինի ընդամէնը ածանցեալներն են յաջողութիւնները կամ ձախողութիւնները:*

*Իսկ ինչպիսի՞ն էր ՀՀ հասարակութեան ու հայկական բանակի բարոյահոգեբանական վիճակը 1920 թ. աշնանը: Թւում է, թէ ամէն ինչ ընթանում էր լաւ, գոնէ այդպէս էին իրենց համոզուած ցոյց տալիս հանրապետութեան ու նրա բանակի ղեկավարները. բոլշեւիկների մայիսեան խռովութիւնը ճնշուել էր, երկրի տնտեսութիւնը վերելք էր ապրում, կենսամակարդակը, թէկուզ դանդաղօրէն, բարելաււում էր, ունէինք լաւ հանդերձաւորուած, պարէնով, ռոճիկով ու զէնքով ապահովուած բանակ (ռազմական կարիքները խժռում էին պիւտճէի 85 տոկոսը), որ տարածաշրջանում ամենամարտունակն էր համարւում՝ նախորդ երկու տարիներին յաղթած լինելով թուրքերին, ատրպէյճանցիներին ու վրացիներին՝ այն էլ անհամեմատ աւելի ծանր կենսապայմաններում: Հենց այս գործօններն էլ բթացրել էին հայրենաբնակ հայութեան ու նրա քաղաքական եւ զինուորական ղեկավարութեան զգօնութիւնը. ժողովուրդը մոռացել էր, որ շրջապատուած է թշնամի կամ անբարեացակամ հարեւաններով, որ հարկաւոր է միշտ պատրաստ լինել պատերազմի՝ խաղաղ ու անվտանգ կեանքն ապահովելու համար: Շահան Շահնուրի ձեւակերպումով՝ «հայի լակոտը», վտանգն անցած համարելով, սկսել էր այլասերուել: Ամէնուր տիրում էին կաշառակերութիւնն ու հասարակական բարքերի անկումը, չափանիշները գլխիվայր էին շուռ եկել, պետական գանձը կողոպտողները հասարակական գիտակցութեան մէջ ոչ թէ բացասական կերպարներ էին ընկալւում, այլ՝ յաջողակներ, նոյնիսկ պետական այրերի զգալի տոկոսը եւ զինուորական բարձրաստիճան հրամանատարութեան ջախջախիչ մեծամասնութիւնը հանրապետութիւնը բացայայտօրէն համարում էին «թիւրիմացութիւն», «ժամանակաւոր մի երեւոյթ», ու երազում էին «էն սհաթը» որ ռուսը - կարմիր, սպիտակ թէ այլ գոյնի՝ կարեւոր չէ - նորից կը տնօրինէր իբր թէ անկախ հանրապետութեան ու նրա բնակչութեան ճակատագիրը:*

*Կարսի անկման հայկական ներքին պատճառները կարելի է դասակարգել հետեւեալ կէտերում.*

*Ա. Գաղափարական պատճառներ. - Դրանցից հիմնականներն են՝ ՀՀ բանակի հրամկազմի ապազգա-*

*Շար.ը էջ 18*



# ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 55-ԱՄԵԱԿ
# ՓՐՈՖ. ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿԱԶԵԱՆ
# (1870-1921)

*ՎԵՐ. ՊԱՐԳԵՒ Ն. ՏԱՐԱԳՃԵԱՆ*

*Ծնած է Հաճըն, (Թուրքիա)՝ 22 Սեպտեմբերի, 1870ին: Այս քաղաքը տուած է հայ ժողովուրդին անհամեմատ թիւով մտաւորականներ, ազգային բարերարներ, ու յատկապէս հայ ազատագրութեան նուիրուած յեղափոխական գործիչներ: Հաճընցի պատմագրողներ կը հաղորդեն մեզի թէ Հաճնոյ ժողովուրդը նաեւ եղած է խիստ հաւատացեալ, ու եկեղեցասէր: Դժբախտաբար, կենսագիրներ չեն յիշած Հայկազեանին ծնողքին անունները. տեղեկութիւններ չունին նաեւ իր մանկութեան կեանքին շուրջ: Ուրեմն, պիտի հետեւինք նախ իր ուսումնական կեանքին:*

### Ա. Հայկազեանին Ուսումնական Կեանքն ու Պատրաստութիւնը

Once alumni and guests had the opportunity to mingle and to enjoy the full refreshment table a short program took place. Professor Barlow Der Mugrdechian, current Director of the Armenian Studies Program, began the program by introducing professors new and old to the guests. He also introduced former Program Secretaries Fran Ziegler and Kati Litten. Brief comments were made by Dean Vida Samiian, explaining the importance and influence the Armenian Studies Program has had on the College of Arts and Humanities. Dr. Dickran Kouymjian was especially invited from Paris to be present at the reception. He described the joys of teaching and reminisced about the struggles and successes of the Armenian Studies Program. Dr. Sergio La Porta, the Berberian Chair of Armenian Studies extended his welcome to the guests and wished the Armenian Studies Program many more years of success.

As the reception was ending, it was easy to see that the event had been quite a success. Alumni left feeling content that new students were active, faculty were pleased to see the progress of their former students, and current students left feeling fortunate to be part of a strong and great tradition.

# Armenian Parliament Postpones Vote

**Continued from page 1**

nian President Serzh Sarkisian in the negotiations continuing within the framework of the OSCE Minsk Group."

This was the second time Zharangutyun postponed the vote. The first time was before the Organization for Security and Cooperation in Europe organized a field assessment mission in the Armenian-controlled territories around Nagorno-Karabakh in early October.

Zharangutyun leader Raffi Hovannisian has indicated that the party's faction will no longer postpone the vote on the bill, which is now scheduled to take place on December 9.

"I hope that before that the political majority will essentially revise its position and a unanimous passage will become ripe," Hovannisian said.

HHK parliamentary faction secretary Eduard Sharmazanov explained that the decision not to take part in the vote and effectively scuttle it was not a "political whim" and that the position of Armenia's leadership on Karabakh's recognition remains unchanged.

"The authorities of Armenia must do everything for the international recognition of the Artsakh republic. If there are steps that would be useful and would help to speed up Artsakh's international recognition, then the HHK and the political majority will take that step," said Sharmazanov.

# ՅԱՌԱՋԱՆՔ

## (ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆԻ ԴՈՒԴՈՒԿԻ ԵԶԱԿԻ ԿՈՆՑԵՐՏԻ ԱՌԹԻՒ)

*ԼԱԵՐՏ ՄՈՎՍԻՍԵԱՆ*
*ՀՀ Արուեստի Վաստակաւոր Գործիչ,*
*Ֆիլհարմոնիկ Կենտրոնի Նախագահ, Ռեժիսոր*

... Կնոջ գրաւիչ բաց կրծքի նման յաւերժական այդ լեռը դէմքն է բացել եւ դիւթում է, եւ կախարդում:

Ախ այդ Մասիսը, մի դար առաջ Եղեռն է տեսել, մարդկային մեծ սպանդ, ու հիմա էլ՝ լռում է: Վէրքը խորն է, ներքուստ է կորատւում:

Ախ այդ Մասիսը, ինչեր ունի պահած իր սրտի խորքերում:

Բայց..., - այս ի՞նչ հոգոց է, այս ինչ հոգեպարար մեղեդի է, որ բարձրանում է Նրա խառնարաններից: Ի՞նչ է արտաբերում Նոյեան այս լեռը:

- Լռի՛ր ու լսիր, Մասիսը իր լեզուն դուդուկի պիպիչին է յառել եւ հեւում է: Հրաշք է, անուրջ, թէ՞ եղելութիւն:

Զգիտեմ. խաբկա՞նք է, թէ՝ իրականութիւն:

Բայց որ Մասիսը խօսում է հայերէն՝ անժխտելի է: Եւ Նրա հայերէն արտաբերումը դուդուկի յոգնած կանչով, լսել ու արտայայտել է ճանաչուած երգահան Հենրիկ Անասեանը: Կէս դար Անասեանը աշխարհին է յանձնում հայ երգի իր աղբիւրը: Այդ երգաջուրը ծորուն է ու մեղեդային, սիրոյ նման թաց ու գարնան նման կանաչ: Նուագախմբեր, երգչախմբեր, համոյթներ է ստեղծել Անասեանը, ապացուցելով իր գէնի ճշմարտութիւնը, արուեստի հաւատաւոր արժէքը:

Երեւանի կոնսերուատորիայի սանը շատ տարիներ առաջ, յանգամանքների բերումով յայտնուելով Ամերիկայում, իր հետ տարել է հայ երգի շաղը, խորքային միտքն ու անդրադարձի պարզութիւնը:

Դրա համար Նրա երգերը երգւում են: Եւ ստեղծագործական այդ մեծ քարաւանը յանկարծ պատռուեց, ժայթքեց եւ լաւաների միջից յառնեց մի նոր ԴՈՒԴՈՒԿ, մի նոր աստղային երրորդութիւն, որ հայի երէկն է, այսօրը, վաղը, անձնագիրը, որ ապրած դարերի քուչակեան շառաւիղն է եւ Կոմիտասի երգ-երգոցի ծաղկեփունջը:

Ախ, այդ զարմանալի Անասեանը. երգեր ու սիմֆոնիկ գործեր է գրում ու նաեւ՝ գրքեր, պատմուածքներ, ակնարկներ: Գրում է, ոնց որ բոլոր շնորհաշատ մարդիկ: Սակայն այս անգամ ուրիշ է: Հաւաքէք ձեր փէշերը, լաւ տեղաւորուէք աթոռակին: Ու հանգչող լոյսերի խորանում բարեւ ասէք Վենեզուէլայի սիմֆոնիկ մեծ նուագախմբին, որ այս երեկոյ կատարում է Անասեանի նոր ստեղծագործութիւնը: Շոստակովիչի «Երիտասարդական» նախերգանքից յետոյ յանկարծ ընկնում ես Մասիսների գիրկը ու կախարդւում: Ասես նստած ես հայոց պատմութեան դասին: Ասես թերթում ես հայ երաժշտութեան հանրագիտարանը:

- Ա՜յ քեզ գզացողութիւնը:

Մեր ճանաչուած դուդուկը այսօր կանգնել է սիմֆոնիկ նուագախմբի յարգարժան կարեւոր գործիքների կողքին եւ մեղեդիկ արտաբերում է ողջ բազմերանգ հզօրութեամբ: Մեր փոքրիկ եղեգնեայ դուդուկը մի քանի անցք ունի միայն եւ հզօր հոգի արտայայտելու կարողութիւնը:

- Դուդուկը դու ես ու էլի դու: Ինքդ քո մէջ: Դու ես, դու...

... ԴՈՒԴՈՒԿ

- Եւ դու, որ հիմա Հենրիկ Անասեանն ես, ասում ես՝ ահա իմ ժողովուրդը, որտեղից է եկել եւ ուր է գնում:

Եղիշէ, Խորենացի, Թովմա Արծրունի, Լէօ, Ագաթանգեղոս, Յակոբ Մանանդեան, Յակոբ Անասեան...

Նարեկացի, Քուչակ, Ֆրիկ, Թումանեան, Իսահակեան, Տէրեան, Չարենց, Շիրազ, Սեւակ, Համօ Սահեան, Սիլվա Կապուտիկեան:

Կոմիտաս, Եկմալեան, Չուխաճեան, Տիգրանեան, Խաչատուրեան, Պապաճանեան, Յովհաննիսեան, Ամիրխանեան:

- Այս բոլոր երեւելի, երեւելի գործերի մի ամուր շաղախն է ամբարուած Հենրիկ Անասեանի դուդուկի կոնցերտում, այս եռամաս էլեգիայում, որ ցնցում է ունկնդրին իր խորքային եւ արտայայտման անզուսպ պարզութեամբ եւ խորախորհուրդ իմաստնութեամբ:

- Ո՛չ, սրանք ամպագորգոռ բառերի շարան չէ եւ հարթային պարզունակ հրճուանք, սա իրական ասքի բոյլ է, որ զարմացնում է նշանակէտին հարուածելու իր սրնթացութեամբ: Սա երաժշտական վէպ է՝ հսկայածաւալ տարողունակութեամբ, որ ցնցում, մխրճում է հոգուդ խորքը: Քսանմէկերորդ դարում գրել այսպիսի համահաւաք դասականօրէն էպոս, - նշանակում է սխրանք կատարել: Սխրանք, յանուն քո ժողովրդի աննուաճ փառքի: Անասեանին դա իրօք յաջողուել է: Վենեզուէլայի Սիմոն Բոլիվար նշանաւոր սիմֆոնիկ նուագախումբը գերազանցում է բոլոր սպասելիքները: Հենց սկզբից ասեմ. երաժիշտների՝ նիւթը ընկալելու եւ արտաբերելու նրանց ներշնչանքը յարգանքի է արժանի:

Օտար մի ջահել նուագախումբ եւ նրա բոլոր անդամները աշխատում են քո մելոսն ու մեղեդին զգալ քո սրտի խփոցի մաքրութեամբ եւ ամէն ինչ անում են, որ քո հաւատը անցնի իրենց, որ քո սիրոյ բանալին բացի իրենց զգացմունքային ովկիանոսի դռները: Եւ դիրիժոր Ալֆրէտօ Ռուհելէսի հաւաք ձեռքերը, ստեղծագործութիւնը վերլուծելու ուրոյն պահուածքը ինձ յիշեցնում է Հերբերտ ֆոն Կարայեանի դասական շարժուձեւը, որի մօտ օդի մէջ ոչ մի հնչիւն ազատ չի թռչում, նա գալիս հանգրուանում է քո սրտի ծալքերում: Եւս մի յայտնութիւն՝ դուդուկահար Պէդրօ Էուստաչէն: Այս զարմանալի վարպետ երաժիշտը, որ սիմֆոնիկ նուագախմբի բազմաթիւ գործիքների է տիրապետում, մեր դուդուկը դարձնում է հզօր ջութակ, ալ, շեփոր, կլավեսին:

Հռչակաւոր այս կատարողը դուդուկի հզօր թոքերը լայնօրէն բացած մտնում է ծալքերի խորխորատները, մտնում է մէկ տխուր, արտասուալի, մերթ հուժկու ու տօնական: Նրա դուդուկը երգում է բազմերանգ հնչերանգներով: Նրա դուդուկը մէկ մագաղաթ է, մէկ գրիչ, մէկ գուլալ աղբիւր, մէկ իրական հառաչ: Վերին եւ ներքին տեմբերում նա փողկանչ է յղում իր հզօր ամբոխին, բազմաձայն պատարագին եւ «Հայր Մեր»ի շուրթերով անմահութեան եւ ազնւութեան կամուրջ կապում: Ահա թէ ինչ ասել է վարպետ, տաղանդաշատ, խորաթափանց եւ ժամանակի մէջ ապրող արուեստագէտ:

- Ո՛չ, ինձ միայն արտաքին փայլը չէ, որ յուզում է... օտար արուեստագէտը դուդուկ է նուագում: Սրանից անկախ, լա՛ւ է նուագում, շունչ, հոգի եւ վարպետութիւն է դնում, իսկ ամենակարեւորը՝ դուդուկը դարձնում է իրենը: Եւ հիմա մեզ է մնում իրենից վերցնել դուդուկը եւ իր նման բազմանուագ ու չքնաղ նուագել:

Հենրիկ Անասեանը դուդուկի իր կոնցերտում պատմում է մեր մասին, մեր պատմութեան եւ քսան-

*Շար.ը էջ 18*

ԱՄԱՆՈՐԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ ԽՐԱԽՃԱՆՔ



Խանդավառութեամբ՝
UNEEK ENTERTAINMENT
DJ Սագօ
Կաղանդ Պապա, փոքրիկներու նուէրներ,
ճոխ յայտագիր եւ անակնկալներ
*31 Դեկտեմբեր 2010 – Երեկոյան Ժամը 8էն սկսեալ*
*Կարօ Սողանալեան սրահէն ներս*
*1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104*
*Մուտքի նուէր $50 ($25 5-12 տարեկան Փոքրիկներու)*
*Հեռաձայնել (626) 497-5111 Քնարիկին*

---

NEW YEAR'S EVE
Dinner Dance
Music performed by
UNEEK ENTERTAINMENT
DJ Sako
Entertaining program with many surprises
Santa Claus, gifts for children,
*December 31, 2010, starting at 8 pm.*
*Garo Soghanalian Hall*
*1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104*
*Donation: $50 ($25 for children)*
*Please call (626) 429-8366 Dzovig*

## ԸՆԴԴԷՄ «ՅԻՄԱՐԱՑՆԵԼՈՒ» ԵՒ «ՀՆԵՑՆԵԼՈՒ»

***ԱՐՄԵՆՈՒՀԻ ԹՈՒՄԱՆԵԱՆ***

*Հայաստանում հայոց լեզուն պաշտպանուած է «Լեզուի մասին» ՀՀ օրէնքով: Դա նշանակում է, որ կրթութիւնը, հրապարակաւ հնչող ելոյթները, ցուցադրուող կինոնկարներն ու տեսանիւթերը, պաշտօնական գրութիւնները, ձեւաթղթերը, ցուցանակները եւ այլն, պէտք է լինեն գրական հայերէնով: Որ այս օրէնքը քիչ թէ շատ գործում է, վկայում է թէկուզ այն իրողութիւնը, որ հայկական հեռուստաեթերում նուազագոյնի են հասել չթարգմանուած ֆիլմերը եւ օտար լեզուներով հնչող խօսքը: Բայց եւ այնպէս՝ մեր հասարակութեան խօսքի մշակոյթը վերջին շրջանում բաւականին խախտուել է: Դրան մեծապէս «նպաստել» է նոյն հեռուստեսութիւնը. ունենալով հարիւր հազարաւոր մարդկանց վրայ ազդելու հսկայական հնարաւորութիւն՝ այն թերպատրաստուածների գիտակցութեան մէջ մէկընդմիշտ ամրագրում է հնչած կամ լուսագրուած սխալ բառերն ու արտայայտութիւնները: Փոքր չէ նաեւ հաղորդակցութեան միւս միջոցների, ինչպէս նաեւ կրթութեան համակարգի բացասական ազդեցութիւնը: Լեզուական բացայայտ սխալների դէմ պայքարելով, դրանք ի ցոյց դնելով եւ ճիշտն առաջարկելով է հնարաւոր 21-րդ դարին յարիր ներուժ հաղորդել հինաւուրց եւ այսօրուայ պահանջները միանգամայն բաւարարող հայերէնին: Խնդրի լուծումը դժուարացնող հանգամանք է բազմաթիւ բարբառների առկայութիւնը եւ երկու գրական տարբերակների զուգահեռ գործածութիւնը, մանաւանդ որ սահմանը բաց է, եւ սփիւռքահայերն արդէն հիւր չեն, այլ գրեթէ տանտէր: Եւ այսպէս՝ լեզուական որոշակի աղաւաղումների մասին: Այս օրերին հայկական հեռուստատեսութեամբ սերիալ դիտողները կարող են բառապաշարը «հարստացնել» հետաքրքիր բառով՝ դատաւորութիւն: Լսողն առաջին նուազ մտածում է, թէ սխալ լսեց, յետոյ՝ թէ կրկնօրինակողը լեզուի սայթաքում թոյլ տուեց: Որոշ հեռուստադիտողներ էլ, անշուշտ, կարող են ենթադրել, թէ իրենց իմացածն է սխալ. չէ՞ որ աւոր վերջածանցը բոլորին է յայտնի: Ահա եւ կազմուել է ածանցաւոր բառ: Իրականում դատաւորութիւն բառը հայերէնում կարող է նշանակել միայն «դատաւոր լինելը»: Այսու՝ մեր լեզուից սկսել է դուրս մղուել մի շատ սովորական, հասկանալի ու հայերէնի բոլոր օրէնքներին հարազատ բառ՝ դատավարութիւնը, որն անշուշտ՝ դատ վարել է նշանակում:*

*Թուցէ այս միտքն առայժմ չափազանցուած է, սակայն արդէն հիմնաւորում ունի՝ բառը նշուած սխալ ձեւով է հնչել նաեւ որոշ հաղորդավարների շուրթերից: Թարգմանուած կինոնկարներում մեծ տարածում է գտել ի սէրն Աստծոյ արտայայտութիւնը: Աստծոյ նկատմամբ այս յատուկ սէրն ընդգծւում է միայն հայերէնի որոշ բարբառներում, իսկ գրական հայերէնում եւ բարբառների մեծ մասում բնական ու ճիշտ է ասել՝ ի սէր Աստծոյ: Ի դէպ, սեփական բարբառը ամբողջ հեռուստալսարանին պարտադրելը լեզուական բարձր մշակոյթի մասին չէ, որ վկայում է: Որ մեր լեզւում գոյականի յոգնակին կազմւում է եր եւ ներ վերջաւորութիւններով, թերեւս գիտի հայերէն խօսող իւրաքանչիւր մարդ: Եւ բնաւ պարտադիր չէ քերականութեան նրբութիւններին տիրապետել՝ որոշելու համար, թէ որ դէպքում որ վերջաւորութիւնը պէտք է ընտրել: Մանկութիւնից մարդու ականջն ընկալում, լեզուն էլ արտայայտում է քերականական հարազատ ձեւերը՝ առանց դրանք վերլուծելու: Քերականութեան այբուբենին ծանօթանալը, երեւում է, մեր հասարակութեան մէջ երբեմն բացասական դեր է կատարել. մարդիկ սկսել են խառնել, թէ երբ պէտք է եր աւելացնել, երբ՝ ներ: Եւ արդէն չես էլ զարմանում, երբ ենթադրեալ գրագէտ ու ազդեցիկ մարդն արտասանում է՝ զգեստեր, շտաբեր:*

*Մինչդեռ այս գոյականները պէտք է յոգնակի դառնան ներ վերջաւորութեամբ՝ զգեստներ, շտաբներ: Սա շատ տարածուած սխալ է եւ արդէն սպառնում է խարխլել գոյականի յոգնակին կազմելու համակարգը՝ վնաս հասցնելով հայոց լեզուի զարգացման ընթացքին: Չափազանց տարածուած է նաեւ հետեւեալ սխալը. անընդհատ հնչում է՝ թարմեցնել, խոնաւեցնել, յիմարեցնել, հնեցնել եւ այլն: Ներգործական սեռի այս բայերի ճիշտ ձեւը գտնելու բանալին դրանց չէզոքը յիշելն է: Բաւական է միայն իմանալ. մենք ասում ենք վախեցնել, որովհետեւ կազմուել է վախենալ սոսկածանցաւոր բայից՝ ցն ածանցով, եւ համապատասխանաբար թարմանալ, խոնաւանալ, յիմարանալ, հնանալ բայերն էլ, ներգործական ածանց ստանալու դէպքում, կ'ունենան թարմացնել, խոնաւացնել, յիմարացնել, հնացնել ձեւերը: Այլապէս պէտք է ընդունենք, թէ սրանց չէզոքն ունի թարմենալ, խոնաւենալ, յիմարենալ, հնենալ տեսքը:*

*Վերջիվերջոյ՝ խօսքի մշակոյթ կարելի է ձեռք բերել՝ օգտագործելով նաեւ սեփական վերլուծական միտքը: Չէ՞ որ դա համարւում է հայերիս գլխաւոր արժա-*

***Շար.ը էջ 16***




## ԽՈՀԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃՈՊԱՆՈՒՂԻԻ ԱՌԻԹՈՎ

***ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ***

*Զգայացունցի վարպետն է նախագահ Ս. Սարգսեան: Կարելի է ըսել թէ զգայացունցը իր մասնագիտութիւնն է: Զգայացունց դէպքերու շարքին առաջին եղաւ Մեծ Ոճիրին կազմակերպումը, որուն զոհ եղան հայ ազգին լաւագոյն զաւակներէն ընտրեալ խումբ մը՝ Կարէն Դեմիրճեանի եւ Վազգէն Սարգսեանի գլխաւորութեամբ: Այս ոճիրը ճամբայ հարթեց որ ինք եւ իր աւագ գործակիցը՝ Ռոբերտ Քոչարեան իրարու յաջորդեն իբրեւ Հայաստանի նախագահ: Անոնք այսպէս «վարձատրեցին» իրենց բարերարները, որոնք նախագահ Լ. Տէր Պետրոսեանի գլխաւորութեամբ, գիրենք Ղարաբաղէն Հայաստան փոխադրեցին արար աշխարհին ցոյց տալու համար որ այս երկու անկախ երկիրներուն բնակչութիւնը նոյն հայ ժողովուրդն է: Այսօր անոնցմէ ողջ է Լ. Տէր Պետրոսեանը միայն, որուն ողջ մնալը վտանգաւոր չեն նկատեր կ'երեւի:*

*Երկրորդը եղաւ «ֆութպոլային քաղաքականութիւն»ը: Շուրջ երկու տարի առաջ Երեւանի մէջ տեղի ունեցած հայ-թուրք ֆութպոլի մրցումի մը առիթով Ս. Սարգսեան Թուրքիոյ նախագահ Ապտիւլլահ Կիւլը հրաւիրեց միասնաբար մրցումը դիտելու: Այս նախաձեռնութիւնը կապուած էր նաեւ իր միւս ակնկալութեան՝ Հայաստան-Թուրքիա սահմանի բացման: Բայց մրցումի աւարտին, նախագահ Կիւլ երկիրը վերադարձաւ՝ առանց սահման բանալու յանձնառութեան: Այս նախաձեռնութեան մէջ ալ ձախողեցաւ Սարգսեան, ինչ որ բարեբախտութիւն պէտք է նկատել, որովհետեւ բաց սահմաններով Թուրքիան Հայաստանի գոյութեան սպառնալիք մըն է: Երեւակայենք որ բաց սահմաններէ քանի մը միլիոն թուրքեր Հայաստան հաստատուին, գործ ընեն, հայ աղջիկներու հետ կենակցին կամ ամուսնանալով թուրքի խառնածիններ յառաջ բերեն, որոնց թիւը ժամանակի ընթացքին կրնայ գերազանցել հայոց թիւը, Հայաստանի գոյութեան համար իսկ վտանգ ներկայացնելով:*

*Ապա ձեռք առաւ հայ-թուրք թշնամութիւնը բարեկամաբար լուծելու թղթածրարը, որուն համար Ցիւրիխի մէջ, 10 Հոկտեմբեր 2009ին Ս. Սարգսեան ստորագրեց «Արձանագրութիւններ» անուան տակ ծանօթ համաձայնագիրը՝ օրհնութեամբը աշխարհի մեծերուն: Եւ «լեռը ծնաւ մուկ մը չնչին»: Ատկէ մնաց հայ-թուրք յարաբերութիւնները բարելաւելու եւ ցեղասպանութեան մասին հայոց պնդումը քննելու կոչուած յանձնախումբի մը կազմութեան ուրուականը: Այս բոլորը այն պահուն, երբ նորընտիր նախագահ Պ. Օպաման, նախքան ընտրուիլը ցեղասպանութեան պատմական իրականութիւն մը ըլլալը բազմիցս ընդունած ըլլալով, կ'ակնկալուէր որ ճիշդ բառովը՝ Ցեղասպանութիւն որակէր հայաջինջ աղէտը՝ Սերժ Սարգսեան Թուրքիոյ հետ բանակցութեան նստաւ Ցիւրիխի մէջ:*

***Շար.ը էջ 16***




EVERYDAY LOW PRICES!
Grey Goose Vodka All Flavors $21.99
Jack Daniel's Old No.7 Whiskey $13.99
Cazadores Reposado Tequila $19.99
Hennessy VS Cognac $21.99
Ciroc Vodka All Flavors $19.99
Skyy Vodka 1.75L $17.99
Chivas Regal 12 Yr Whisky $16.99
Corzo Silver Tequila $29.99
Hennessy VSOP Cognac $32.99
Gantous & Abou Raad Arak $11.99
Stolichnaya Vodka 1.75L $21.99
Dewar's 12 Yr Whisky $14.99
Patron Silver or Reposado $29.99
Jacques Cardin VSOP Cognac $14.99
Corralejo Reposado Tequila $21.99
Ketel One Vodka $17.99
Johnnie Walker Blue Label $119.99
Tres Generaciones Silver or Anejo $26.99
Remy Martin VSOP Cognac $31.99
Noy 5 Yr Armenian Brandy $18.99
Russian Standard Vodka $9.99
Dewar's White Label 1.75L $24.99
El Jimador Reposado Tequila $14.99
Grand Marnier $29.99
Absolut Vodka $13.99
Courvoisier VS Cognac $17.99
Courvoisier VSOP Cognac $27.99
Disaronno Amaretto $13.99
Espolon Silver or Reposado $19.99
Sailor Jerry Rum $12.99
SOUTHERN CALIFORNIA'S PREMIER WINE & SPIRITS SUPERSTORE!
MISSION Wine & Spirits
3 LOCATIONS TO SERVE YOU
• 1785 E. Washington Blvd., Pasadena (corner of Allen) • (626) 794 -7026
• 825 W. Glenoaks Blvd., Glendale (corner of Highland) • (818) 242-0683
• 13654 Burbank Blvd., Sherman Oaks (corner of Woodman) • (818) 785-6529
Hours: Mon. - Sat., 9am - 8pm • Closed Sunday
*This ad expires on 11/20/10 • We reserve the right to limit quantities • No CCs • Sales tax excluded • Prices subject to change without notice.
• Ad prices may remain in effect longer than the time period indicated • All items are 750ml in size unless specified.

## ԽԵՂԱԹԻՒՐՈՒԱԾ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

*Բրիտանական եւ ռուսական հրատարակչութիւններն աղաւաղել են Հայաստանի մասին հիմնական փաստեր Մեծ Բրիտանիայի Kingfisher Publications-ի եւ ռուսական «Махаон» հրատարակչութեան հրատարակած «Պատկերազարդ աշխարհագրական մեծ հանրագիտարանի» տուեալներով՝ Հայաստանում հիմնական լեզուները հայերէնն ու ատրպէյճաներէնն են, իսկ հիմնական կրօններն են ուղղափառ քրիստոնէութիւնը եւ իսլամը, մասնաւորապէս՝ շիա ուղղութիւնը:*

*Երեւանի գրախանութներում 10.000 դրամով (33 դոլար) վաճառուող հանրագիտարանի ռուսերէն տարբերակը հրատարակուել է 2009-ին 15.000 տպաքանակով:*

*«Սա սարսափելի խեղաթիւրում է, որի դէմ պէտք է պայքարենք»,- ասում է «Անկախ» շաբաթաթերթի (տպաքանակը՝ 2000 օրինակով) գլխաւոր խմբագիր Վարդուհի Իշխանեանը՝ յաւելելով, որ նամակով դիմել է հրատարակչութիւններին՝ պահանջելով հերքել ապատեղեկատուութիւնն ու դադարեցնել գրքի վաճառքը:*

*«Լռելն անթոյլատրելի է: Այս խնդրով հետաքրքրուել են նաեւ [ՀՀ] Նախագահականում եւ խոստացել են աջակցել յետագայ գործընթացներին»,- ասում է Իշխանեանը:*

*Հանրագիտարանի անգլերէն տեքստում նշուած է, որ «այս գիրքը իւրաքանչիւր երկրի անձնագիրն է:*

*«Պատկերազարդ աշխարհագրական մեծ հանրագիտարանը» հեղինակութիւն է, աշխարհի երկրների մասին՝ արդի ուղեցոյց«:*

*http://www.panmacmillan.com/titles/displayPage.asp?PageTitle=Individual*

*Մինչդեռ Հայաստանի «անձնագիրը», մեղմ ասած, խեղաթիւրուած է:*

## ԲԱՑԱՅԱՅՏՈՒԵԼ Է ՉԻՆԱԿԱՆ ՊԱՐՍՊԻ ԱՄՐՈՒԹԱԵՆ ԳԱՂՏՆԻՔԸ

*Չինացի գիտնականները պարզել են Չինական պարսպի ամրութեան եւ «երկարակեցութեան» գաղտնիքը: Քիմիկոսները պարզել են, որ կառոյցի քարէ սալիկներն ամրացնող լուծոյթի բաղադրութեան մէջ ներառուած է եղել բրնձի մածուցիկ շիլա:*

*Չժեցզեան շրջանի համալսարանի պրոֆեսորի խօսքով՝ մօտ 600 տարի առաջ Չինական պարիսպը կառուցող բանուորները սալիկներն ամրացնող լուծոյթը պատրաստել են եփած բրնձից եւ թոյլ կիրից. այդ ժամանակ բրնձի շիլայի օգտագործումը բաւական առաջադէմ եւ նորարար քայլ էր:*

*«Լուծոյթի գաղտնիքը օրգանական եւ անօրգանական նիւթերի յատուկ համադրման մէջ է, որի արդիւնքում ստացւում է բարձր մեխանիկական ամրութեամբ օժտուած մի նիւթ»,- պարզաբանել է գիտնականը. հողի այն հատուածներում, որտեղ այդ լուծոյթից մէկ-երկու կաթիլ է թափուել, մինչեւ հիմա բոյս չի աճում:*

*Հետաքրքրական է, որ բրնձի այն տեսակը, որից ամուր սոսինձ էր պատրաստւում, բանուորներն օգտագործել են նա սննդի մէջ:*

## ԽՈՀԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃՈՊԱՆՈՒՂԻԻ ԱՌԻԹՈՎ

*Շարունակուածէջ 14-էն*

*Թէ որքան եւ ինչպէս վարձատրուեցաւ այդ ազգաղաւաղրանքին համար, չենք գիտեր, բայց Օպամա այդ անել կացութենէն դուրս եկաւ արդարանալի պատճառաբանութեամբ մը, թէ ինք չէր ուզեր հայ-թուրք բանակցութիւնները խանգարողի դերին մէջ ըլլալ:*

*Այժմ, զգայացունցի հերթը ճոպանուղիինն է: Կարգ մը աղբիւրներու համաձայն զուիցերիական ընկերութիւն մը շինած է Հալիձորէն մինչեւ Տաթեւի վանք երկարող 5700 մեթր այդ ճոպանուղին, որ աշխարհի ամենաերկարն է կ'ըսուի եւ արժած է 50 միլիոն տոլար: Հայաստան... եւ աշխարհի ամենէն երկար ճոպանուղին (թելեֆերիք): Հարկաւ ատկէ պակասը չի վայելեր Ս. Սարգսեանի Հայաստանին: Պէտք է փոշի յարուցել ժողովուրդին տեսողութիւնը խափանելու համար: Կեանքը անտանելի դարձնող օրէնքի եւ արդարութեան բացակայութիւնը ծածկելու համար, թոյլ չտալու համար որ մարդիկ ուրիշ բանի մասին կարենան մտածել, բացի իրենց ապրուստէն: Իսկ ժողովուրդը դառն փորձառութեամբ գիտէ, թէ ինչ կ'արժէ իր դժգոհութիւնը եւ զայն խաղաղ ցոյցով արտայայտելու իր իրաւունքը, որ վերջ գտաւ Ապահովութեան ուժերու գնդակահարման զոհ գացած քառասնեակ մը նահատակներով, որոնք կրնային շատ աւելի ըլլալ, եթէ Լ. Տէր Պետրոսեան չհրահանգէր ցոյցերը դադրեցնել, ի տես սպանդին:*

*Մինչ այս է հայրենական տխուր կացութիւնը, թշնամին երբեք չէ հրաժարած պատերազմական պատրաստութիւններէն: Ատրպէյճանի միայն պատերազմական պիւտճէն կը գերազանցէ Հայաստանի ամբողջ պիւտճէն: Բարեբախտաբար, տարբեր է պատկերը Արցախին, ուր իր իշխանութիւններէն եւ ապրելակերպէն գոհ ժողովուրդն ու բանակը վճռած են, ինչպէս տեսնուեցաւ մօտ անցեալին, կեանքի գնով պաշտպանել իրենց բազմադարեան հայրենիքը: Եւ այս վճռակամութիւնը ամենէն զօրաւոր տարհամոզիչ ազդակն է թշնամիին յարձակողական ախորժակները զսպելու:*

massispost.com
daily news updates
massisweekly.com

## ԱՇՈՒՆ ԵՍ, ԱՇՈՒՆ
### ՍԵՐԳԷՅ ՇԱՀՆՈԲԱՐԵԱՆ

Աշուն ես, աշուն.
Տերեւներդ նաշխուն
Օրօրւում են օդում
Ու հանգիստ փռւում:

Քանի քանիսն էլ
Պարում են կարծես,
Որ կեանք են պարգեւել
Ու նոր ծերացել:

Բնութեան իսկ ստեղծած,
Բնութեամբ յարմարուած
Տերեւներն են կանաչ,
Որ կեանք պարգեւած,
Հիմա էլ դեղնած,
Գորշ կամ կարմրած,
Պոկւում են մօրից,
Որ կեանք տան նորից:

Աշուն ես, աշուն:

Քամին է դրսում
Մեղմ ձայնով սուլում,
Տերեւները պոկում,
Քշում է տանում:
Ծառերին թողնում
Անպաշտպան, անշուք
Ու ինձ զարմացնում,
Սեւ գործն է անում:

Աշուն ես, աշուն

Անձրեւն է դրսում
Չորս կողմը թրջում:
Նայում եմ դուրսը,
Հոգիս է տխրում,
Տխրում է ինչպէս
Եկրինքն է տխրած,
Ամպելով ծածկուած,
Որ լաց է լինում:

Աշուն ես, աշուն:

Անձրեւն ու քամին
Իրենց գործն են անում
Բնական կարգով,
Բնութեան ուժով:
Նայում ես, նեղւում,
Արեւ եմ ուզում,
Արեւն է, որ մարդկանց
Հոգիս ջերմացնում,
Ժպիտ է բերում
Կեանքի է կանչում:

Աշուն ես, աշուն
Պայծառ օրերին
Դու չքնաղ աշուն ես,
Ոսկէ աշուն ես
Դու շատ երգերում:
Ու թէեւ առատ ես
Դու բերքով բարի,
Բայց ես աւելի
Գարունն եմ սիրում:
Գարնան կանաչն եմ
Աւելի սիրում:
Նրա բազմաբոյր
Ծաղիկներն եմ սիրում:
Թռչունի երգն եմ
Աւլի սիրում:
Արեւը պայծառ,
Երկինքն էլ ջինջ,
Այս եմ գերադասում:
Ես կեանք եմ սիրում

Աշուն ես, աշուն:

## ԱՇՈՒՆ Է
### ԱՆԱՀԻՏ ԵՐԵՄԵԱՆ

Մշուշուած, մշուշուած, մշուշուած եմ նորից,
Աշուն է, թախիծ է, տերեւներ են դեղին,
Մի բոց է դուրս գալիս իմ անյայտ խորքերից,
Յոյսերս աշնան պէս խշշիւն են ու դեղին:

Մշուշուած, մուշուած, մշուշուած եմ նորից,
աշում են աշնան մէջ, աշնացած մի երազ,
Խենթանում է հոգիս արդեօք ո՞ւմ կարօտից,
Տխրութեան ամպերը տարածուել են վրաս:

Աշուն է, մենակ եմ, հեռո՞ւ եմ բոլորից,
Սարսուռ կայ սրտիս մէջ ու բոցեր կան անմար,
Չգիտեմ թէ ինչո՞ւ մշուշուած եմ նորից,
Յուշեր կան իմ սրտում ու մի սէր անհնար:

## ԸՆԴԴԷՄ «ՅԻՄԱՐԱՑՆԵԼՈՒ» ԵՒ «ՀՆԵՑՆԵԼՈՒ»

*Շարունակուածէջ 14-էն*

*նիքներից մէկը եւ կարելի է օգտագործել ի շահ բարձրարուեստ ու ճիշտ հայերէնի: Վեր կանալ, տատու, պապու, կորչել է, կը կորի, մեր համար բարբառային ձեւերը նոյնպէս «նուաճել» են բանաւոր խօսքի մի մեծ դաշտ, եւ շատերը դրանք ընկալում են որպէս գրական հայերէնի շերտ -փոխանակ՝ վեր կենալ, տատի, պապի. կորել է, կը կորչի, մեզ համար W: Անտարակոյս՝ գրաբարը եւ բարբառները հայոց լեզուի հարստացման հիմնական աղբիւրն են, սակայն խօսքի մշակոյթի մակարդակն ընկնում է, երբ դրանք գործածւում են անքննադատ, անպատեհ, անմշակ եւ մանաւանդ՝ անտեղեակութեամբ:*




USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES
Proudly Announces
INTERNATIONAL SYMPOSIUM
THE ARMENIAN DIASPORA
ELECTIVE LEADERSHIP & WORLDWIDE STRUCTURE
Gov. George Deukmejian
Amb. John Evans
Washington D.C.
Mark Geragos, Esq.
Los Angeles
Dr. Stephan H. Astourian
University of California, Berkeley
Dr. R. Hrair Dekmejian
University of Southern California
Dr. Gaidz Minassian
Foundation for Strategic Research,Paris
Dr. Archalus Tcheknavorian-Asenbauer
Senior Advisor to United Nations, Vienna
Mark Arax
Journalist/Author, Fresno
Harut Sassounian
Publisher, The California Courier
Dr. Andrew Demirdjian
Cal State University, Long Beach
Dr. Levon Marashlian
Glendale Community College
UNIVERSITY OF SOUTHERN CALIFORNIA
1880
PALMAM QUI MERUIT FERAT
SATURDAY, NOVEMBER 20, 2010, 9:30 A.M. - 4:30 P.M.
Town & Gown, University of Southern California
USC Entrance 3 on Figueroa Street, Los Angeles, California
The symposium is open to the public ♦ Complimentary breakfast and lunch will be served
For reservations please contact: armenian@college.usc.edu
USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES
NATIONAL HONORARY COUNCIL
Gov. George Deukmejian
Hon. Edward Djerejian
Hon. John Marshall Evans
Dr. Vartan Gregorian
Hon. Paul Ignatius
Mr. Jerry Turpanjian
LEADERSHIP COUNCIL
Dr. Mihran Agbabian
Mr. John Berberian
Dr. R. Hrair Dekmejian
Mr. Charles Ghailian, Chair
Mr. Frank Varant Melkonian
Dr. Donald Earl Miller
Mr. Vahe Karapetian
Mrs. Lori Muncherian
Mr. Gerald Papazian
Mr. Harut Sassounian
Mr. Sinan Sinanian
Hon. Dickran Tevrizian
Mrs. Savey Tufenkian

## 90 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԱՅՍ ՕՐԸ ԿՈՐՑՐԻՆՔ ԿԱՐՍԸ

*Շարունակուած էջ 6-էն*

*յին նկարագիրը եւ նրա մէջ հայկական անկախ պետականութեան գաղափարի թուլութիւնը կամ ի սպառ բացակայութիւնը, բարձրաստիճան սպայակազմի ռուսական լեզուամտածողութիւնը եւ ռուսամոլութիւնը, դաշնակից զօրքերի օժանդակութեան վրայ յոյս դնելը (մեր աներկբայ համոզումով՝ պետական միակ լեզուի՝ հայոց լեզուի նկատմամբ անարգական վերաբերմունքը ՀՀ առաջին հանրապետութեան կործանման հիմնական պատճառներից է):*

*Բ. Ռազմական պատճառներ. -*

*Բ. 1. Զուտ ռազմական պատճառներ. - Թուարկենք կարեւորագոյնները՝ ռազմական անպատրաստութիւնը, ռազմական պլանի եւ քարտէզների չգոյութիւնը, առկա ռազմուժի խելամիտ օգտագործման սկզբունքի բացակայութիւնը կամ արհամարհումը, ռազմական մանեւրի բացակայութիւնը, տեղանքի առաւելութիւններն ու անպատեհութիւնները գնահատելու անկարողութիւնը, ռազմական հետախուզութեան եւ հակահետախուզութեան խայտառակ վիճակը, ոչ միայն աներեւակայելիօրէն յանցաւոր ներողամտութիւնը ապաշնորհ ու գաղափարազուրկ հրամանատարների նկատմամբ, այլեւ՝ նրանց հովանաւորումը խնամի-ծանօթ-բարեկամ-կաշառք գործօնների ազդեցութեամբ, կաշառասնութիւնը եւ փչացածութեան ուրիշ երեւոյթները թէ՛ հրամկազմում եւ թէ՛ պետական ողջ համակարգում՝ վերեւից ներքեւ, զինուորական բազմաստիճան ենթակայութիւնը եւ ռուսական բանակի ղեկավարման շաբլոնի կիրառումը՝ առանց հաշուի առնելու ՀՀ ռելիեֆը եւ հայ զինուորի բարոյահոգեբանական ու այլ գործօնների տարբերութիւնը ռուս զինուորի նոյն յատկանիշներից, զօրակոչի բարձիթողի վիճակը եւ հարուստների տղաների փախուստը զինծառայութիւնից, հայ զինուորների՝ նոր ստացուած քանատական հրացաններին անբաւարար տիրապետելը, ՀՀ բանակի եւ ռազմական նախարարութեան ապաշնորհ ղեկավարումը, յոյսը Կարսի ամրութիւնների ու հարիւրաւոր թնդանօթների վրայ դնելը (ընդ որում՝ շուրջ 700 թնդանօթների կէսը անսարք վիճակում էր թողնուած), հայկական երկաթուղու խայտառակ վիճակը:*

*Բ. 2.- Ռազմահոգեբանական պատճառներ. - Պատերազմին հոգեբանական անպատրաստութիւնը, թրքական զօրքերի կարողականութեան թերագնահատումն ու սեփականի գերագնահատումը, հրամանատարութեան անգիտութիւնը կամ միտումնաւոր տգիտութիւնը զօրքի որակական արժէքը գնահատելիս, ՀՀ բանակում համատարած անպատասխանատւութիւնն ու անկարգապահութիւնը՝ նոյնիսկ ռազմական գործողութիւնների ընթացքում եւ մեղաւորներին անպատիժ թողնելը, դասալքութիւնը եւ դասալիքներին չպատժելը, զօրքի բարոյալքումը անհարկի նահանջներով՝ յաճախ առանց կռիւ տալու, հայկական եւ թրքական-քրտական էթնոհոգեբանական ու ռազմահոգեբանական առանձնայատկութիւնների հիմնովին անտեսումը:*

*Գ. Բարոյահոգեբանական պատճառներ. - Պատերազմի նախորդած շաբաթներին ու նրա ընթացքում հայերի՝ կռուելու, տոկալու եւ յաղթելու կամքի բացակայութիւնը եւ թշնամու՝ այդ յատկանիշների գերազանցութիւնը, անառողջ մթնոլորտը զինուորական բարձրաստիճան հրամանատարների ու պաշտպանութեան նախարարութեան փոխյարաբերութիւններում, թշնամանքի հասնող հակամարտութիւնը Կարսի նահանգի քաղաքացիական եւ ռազմական իշխանութիւնների՝ յատկապէս նահանգապետ Ստ. Ղորղանեանի ու բերդաքաղաքի պարետ գեներալ-լեյտենանտ Դանիէլ-բեկ Փիրումեանի միջեւ, քաղաքական եւ ռազմական պատկառազդու հրամանատար(ներ)ի բացակայութիւնը թէ՛ Երեւանում եւ թէ՛ Կարսում, ալան-թալանի մոլուցքը ՀՀ քաղաքական ղեկավարութեան միջավայրում եւ Կարսի նահանգի հայկական կանոնաւոր ու անկանոն զօրամիաւորումներում, գաղափարական-բարոյական ու արժէչափերի ահաւոր անկումը ՀՀ բանակում, պետական վարչամեքենայում եւ առհասարակ հասարակութեան մէջ, բարբարոսական կամ յանցագործ անտարբեր վերաբերմունքը հայրենիքի ազատագրուած տարածքների նկատմամբ... (այս գործօնները աղբիւրագիտական հենքի վրայ մանրամասնել եմ իմ հեղինակած «Կարսի 1920 թ. անկման խորքային պատճառները» գրքոյկում (Երեւան, Ա հրատարակութիւն՝ 2008 թ., Բ հրատարակութիւն՝ 2009 թ.), որի համառօտ, զուտ գիտական տարբերակը մինչ այդ լոյս էր տեսել քաղաքական գիտութիւնների դոկտոր Արմէն Այվազեանի խմբագրած «Ռազմավարութեան եւ անվտանգութեան հարցեր» յօդուածների ժողովածուում, Երեւան, 2007 թ.):*

*Վերի տողերը կարդալիս ընթերցողն իր մտքում վստահաբար զուգահեռներ տարաւ 90 տարուայ վաղեմութիւն ունեցող այս պետականակործան երեւոյթների ու մեր ապրած վերջին տարիների իրողութիւնների միջեւ: Եթէ այս գահավէժ ընթացքը շարունակուի, հետեւանքն էլ նոյնն է լինելու՝ կիսատ-պռատ անկախ պետականութեան կործանումն ու է՛լ աւելի աղէտալին՝ հայրենիքի զգալի մասի կորուստը, միգուցէ նաեւ առհասարակ Հայաստանի վերացումը:*

*Քննարկելով վերոյիշեալ ու այլ գործօններ, հանգում ենք հետեւեալ երկու եզրակացութիւններին, որոնցից պէտք է դաս քաղենք, որպեսզի Կարսը չկրկնուի.*

*1. Կարսում ընդհանրապէս հայութեան ու մասնաւորապէս ՀՀ բանակի պարտութիւնը օրինաչափ էր ու անխուսափելի, տրամաբանական ու բնական հանգուցալուծումը հայութեան «հաւաքական դաւաճանութեան» բնութագրումը Անդրանիկ Ծառուկեանինն է. տե՛ս վերոնշեալ աղբիւրը): Բանակը հասարակութեան ոչ միայն հայելին է, այլեւ նրա կարեւոր մէկ մասը. ՀՀ զինուժում ծառայողները մեր որդիները, եղբայրները, ամուսինները կամ հայրերն ու պապերն են, հետեւաբար հասարակական արատները անմիջականորէն փոխանցւում են բանակին, ու ընդհակառակը՝ ինչքան էլ նրանց փոխառնչութիւնների արանքում «զտիչներ» դրուեն: Ուժեղ բանակ ունենալու համար հարկաւոր է ունենալ առողջ հասարակութիւն եւ նոյնքան առողջ պետական վարչամեքենայ: Համատարած փչացածութեան պայմաններում պարտութիւնները մեծ հաւանականութիւն ունեն, երբեմն էլ՝ անխուսափելի են: Բանակը ոգի է, մարտակա՛ն ոգի, որ սնւում է ազգի ոգուց: Ոգեղէն, գաղափարական, բարոյական ու հոգեւոր անկումը անպայման եւ անխուսափելիօրէն առաջնորդում է ֆիզիքական (նիւթական) անկման: Ցաւօք սրտի, այս տարրական ճշմարտութեան գիտակցումը չենք նկատում ՀՀ այսօրուայ քաղաքական ղեկավարութեան, ՀՀ բանակի բարձրաստիճան հրամկազմի ու նրանց հետ սերտաճած խմբիշխանական (օլիգարխիա) չ«ընտրանու» մէջ: Հետեւութիւնը երեւակայելն անգամ պարզապէս սարսափելի է...*

*2. Ազգի ու ազգային պետութեան պահպանման ու հզօրացման յոյսը պէտք է դնել միայն եւ միայն ազգի սեփական կարողութիւնների վրայ՝ դրանք ծայրաստիճան կենտրոնացնելով ու շաղախելով վեհագոյն գաղափարներով եւ ուղեկցելով բոլոր ոլորտների ղեկավարների անձնական դրական օրինակներով:*

*Մեր բախտը պարզապէս մինչեւ հիմա ժպտում է, քանի որ մեր գլխաւոր թշնամին՝ թուրք-ատրպէյճանական հասարակութիւնն էլ վարակուած է ՀՀ հասարակութիւնը ներսից հիւծող այս վարակներով: Իսկ եթէ Ատրպէյճանում յանկարծ յայտնուի Կարսը համարեա առանց կռուի վերցրած ու Հայաստանի առաջին հանրապետութիւնը ոչնչացրած Քիազիմ Կարաբեքիրի նման մի ղեկավար, որն իր մէջ միաւորի թէ՛ ռազմական փայլուն գործչին, թէ՛ դիվանագէտին (Ալեքսանդրապոլի ու Կարսի պայմանագրերում նրա թելադրող ներկայութիւնը՝ վկայ), թէ՛ քաղաքական գործչին, թէ՛ ազգային գաղափարախօսին (տուեալ դէպքում՝ պանթուրքիստին) եւ թէ՛ ռազմական հոգեբանին, ի՞նչ է լինելու մեր եւ ՀՀ ճակատագիրը: Նորի՞ց ենք ապաւինելու օտարներին (այս դէպքում՝ Ստեփանակերտը Խանքենդի կոչող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների երկրներին, Բալկաններում Ռուսաստանի «փորպոստ» սլաւոնական Սերբիան ԱՄՆ-Եվրոմիութեանը զոհաբերած ԱՊՀ-ՀԱՊԿ-ՌԴ-ին, թէ՞ սպասելու ենք... հրաշքների:*

*Իսկ հասարակական կեանքում, առաւել եւս՝ միջպետական յարաբերութիւններում հրաշքներ չեն լինում...*

## ԱԶԳԱՆՈՒԻՐՈՒՄ

*Շարունակուած էջ 8-էն*

*իր նպաստը բերած ինսունամեայ Պրն. Աւետիս Մանուկեանին, որ յառաջացեալ տարիքին իր նկարած պաստառներէն հինգ տասնեակ մը սիրայօժար կերպով նուիրած է իր վաղեմի բարեկամ Պրն. Երուանդ Պապայեանի անունը կրող հիմնարկի բարգաւաճման ֆոնտին՝ առ ի գնահատանք Պապայեան հիմնարկի օգտաշատ աշխատանքներուն՝ սերունդներու միջեւ կապեր ստեղծագործելու անխոնջ ջանքերուն համար:*

*Հուսկ, ելոյթ ունեցաւ նաեւ Պրն. Երուանդ Պապայեան, որ իր գոհունակութիւնը յայտնեց սանուհիներուն եւ դաստիարակներուն, որոնք ամբողջ տարի մը նուիրումով աշխատած էին օրուան պարգեւատրեալներուն հետ: Վերջիններէս խումբ մը ստացաւ յանձնագիրներ, որոնք կարեւոր օգուտ պիտի բերէ համալսարան ընդունման գործընթացին մէջ, ուրիշ խումբ մըն ալ ստացաւ յատուկ յուշամետալներ Սասունցի Դաւիթի եւ Պրն. Ե. Պապայեանի քանդակներով:*

*Բարի երթ եւ նորանոր յաջողութիւններ կը մաղթենք «Ազգանուիրում»ի դաստիարակներուն, սան-սանուհիներուն եւ հիմնադիրներուն:*

*Մ.Գ.*

## ՀԱՌԱՉԱՆՔ

*Շարունակուած էջ 13-էն*

*մէկերորդ դարում աշխարհում գրաւած մեր տեղի մասին: Դրա համարն նրա դուդուկի եռամաս ասերգը բարձրանում է որպէս կանգուն եւ յաւերժական վկայ՝ մեծ ժողովրդի, մեծ պետութեան: Այսօր Հենրիկ Անասեանի դարաւոր թափառական հոգոց հանող գործիքից վերածնւում է աշխարհի աչքերին ճիշդ նայելու եւ աննահանջ ապրելու վկայագիր, ժողովրդի ճանաչման միջազգային վաւերագիր: Հպարտութեան ինչպիսի անմոռաց պահեր ես ապրում Քարաքասի հսկայ համերգասրահում դիտելով ու լսելով Հենրիկ Անասեանի դուդուկի կոնցերտը: Այս պահերը թող կրկնուեն աշխարհի շատ բեմահարթակներում, եւ առաջին հերթին մեր տան քիվին, որովհետեւ դուդուկի ծնողն էլ ենք մենք, Անասեան Հենրիկի հայրն ու մայրն էլ ենք մենք:*

*Մենք՝ հայ ժողովուրդը, որն աշխարհին պարզած հառաչանք ունի...:*

***

*Մօտ կէս ժամ հեռուստացոյցին գամուած ես լսում էի Հենրիկ Անասեանի կոնցերտը: Այս ստեղծագործութիւնը առաջինն ու միակն է մեզանում: Ես ձուլուել էի Քարաքասի Սիմոն Բոլիվար սիմֆոնիկ նուագախմբին, դիրիժոր Ռուհէլէսին: Երեք մասից բաղկացած այս կոնցերտը, որ փայլուն կատարեց մենակատար Պէդրո Էուստաչէն, մեր երաժշտական մշակոյթի ձեռքբերումներից է: Ճամբորդելով իմ սրտի խորխորատներով ես երանաւէտ զգացում ապրեցի չորրորդ դարի «Վարդանի մօր ողբը» հինաւուրց մեղեդու փայլուն երկնագրով, որ այդպէս վարպետօրէն օգտագործել է կոմպոզիտոր Անասեանը: Կոնցերտի երրորդ մասում տարբեր վարիացիաների խառը չափերի երանգում սրտմօտ էր հնչում «Վարդ կօշիկս» ժողովրդական երգի փոխարկերպուած մեղեդին:*

*Սրանք արձանագրական խօսքեր են, իսկ ամենակարեւորը՝ փաստը ԴՈՒԴՈՒԿԻ ԿՈՆՑԵՐՏԻ ծնունդն է, որ մշակոյթի այս գործ հատուածում լոյսի բերկրալի շող է՝ իր աներեւակայելի ընդգրկուն կենսունակութեամբ:*

*Ուրեմն օգտուենք ստեղծագործական այդ մարգարիտից, հպարտանանք, կատարենք, տարածենք:*

*Յիշենք Նարեկացուն՝ սիրոյ գէնը սէրն է...*

*Սիրով հատուցենք Հենրիկ Անասեանի մեծ հառաչանքին:*

*Իմ, քո ապրած կեանքի հառաչանքին:*

*Այդ հառաչանքի մէջ լոյս կայ:*

*Իսկ լոյսը բացուող արեւածագն է:*

*ԱՆՄԵՌ ԼՈՅՍ*

# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

*Հանգուցեալ*
*ՇԱՀՆՈՒՐ ՆՈՐԱՇԽԱՐՀԵԱՆԻ*
*(Ծն. 1953 Լիբանան, մահացած՝ Տէյթըն, Օհայօ, Հոկտ. 3, 2010)*

*մահուան քառասունքին առթիւ, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, Շաբաթ, 13 Նոյեմբեր, 2010, կէսօրուան ժամը 12:00ին, կլենտէյլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայ կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, 1510 E. Mountain Street, Glendale:*

*Սգակիրներ՝*
*Մայրը՝ Մարի (Նորաշխարհեան) Սէրայտարեան,*
*Զաւակները՝ Լէօ եւ Մարգ Նորաշխարհեան,*
*Քոյրը՝ Գաթիա եւ Վարդան Եաղսըզեան,*
*Քրոջ զաւակները՝ Քալին եւ Արա Գամպէրեան,*
*Վանիա եւ Մայքըլ Շանլէյ,*
*Քոյրը՝ Հերա եւ Պերճ Պօյաճեան,*
*Քրոջ զաւակները՝ Սոնիա եւ Ալեքսանտր Ռուսմանիէր,*
*Եւ համայն Նորաշխարհեան, Համալեան, Սէրայտարեան, Եաղսըզեան, Պօյաճեան, Գամպերեան, Շանլէյ, Ռուսմանիէր եւ հարազատները:*

*Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի կլենտէյլի Phoenicia ճաշարանին մէջ, (Լեկսինթընի եւ Սանթրալի անկիւնը):*

## ՓՐՈՖ. ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿԱԶԵԱՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*բացառիկ առանձնայատկութիւնները իբրեւ հայ մարդ, իբրեւ դաստիարակ, գիտնական, եւ հեղինակ: Տանք քանի մը վկայութիւններ.*

*ա. «Փրոֆ. Ա. Հայկազեան կարող դաստիարակ, բեմբասաց, քարոզիչ, եւ գիտնական միտք էր: Իբրեւ ուսուցիչ ան շատ լաւ գիտէր ուսուցանելու մեթոտը, եւ իր գիտական դասերը աւանդելու հաճելի ու հասկնալի կերպը: Անիկա մեծ հոգեբան եւ փիլիսոփայ մըն էր, ու լաւապէս կը ճանչնար իր խնամքին յանձնուած ուսանողները: Պատկառազդու էր իր անձը»: (Նոր Հաճըն Պատմագիրք, 1921-1973: Հրտ. Հաճնոյ Հայրենակցական Միութիւնը - 1974, Պուէնոս Այրէս):*

*բ. Փրոֆ. Հայկազեան ունէր «Աննկուն կամք, վարչական ըմբռնում եւ կարողութիւն, յարգանք ու սէր ներշնչելու թանկագին շնորքը եւ յանկուցիչ ու գիտնական ուսուցչապետի հմայքը: Առանց հակառակութիւն սերմանելու եւ սնուցանելու միսիոնարական հաստատութիւններու հանդէպ՝ Հայկազեան կ՚ուզէր ապացուցանել որ կարելի էր օտար իշխանութենէ անկախ՝ գոլէճ մը իրագործել որ ըլլար քրիստոնեայ, հայ, եւ յառաջադէմ միանգամայն...»: (Վեր. Տիգրան Խրլոբեան. Ոսկեմատեան, Բ. Հատոր, Հրտ. Մերձ. Արեւելքի Հայ Աւետ. Միութեան, Պէյրութ, 1951):*

*գ. «Օր մը, ամերիկացի երկու համալսարանական փրոֆէսորներ այցելութեան եկան Գոլէճը: Անոնցմէ մէկը Գոլէճի հանդիսասրահին մէջ իր վկայութիւնը տուաւ Հայկազեանի մասին՝ հետեւեալ բառերով. «Սիրելի ուսանողներ, դուք շատ բախտաւոր էք որ Փրոֆ. Հայկազեանի նման խիստ կարող նախագահ-փրոֆէսոր մը ունիք, որուն նմանը քիչ կը գտնուի նոյնիսկ ամերիկեան համալսարաններուն մէջ: Գիտցէք, ու գնահատեցէք անոր արժէք»ը: (Յովսէփ Թըգըրեան, Նայրոպի, Քենիա: «Զանասէր» ԼԳ. Տարի, թիւ՝ 21-22, Պէյրութ, Լիբանան):*

*Կարելի է ուրիշ բազմաթիւ վկայութիւններ բերել այս եզակի անձնաւորութեան, համբաւաւոր գիտնական ուսուցչապետին, ու հայ նահատակին կեանքին ու գործունէութեան շուրջ: Սակայն, այսքանը բաւ կը համարենք գէթ փոքր գաղափար մը տալու իր մասին՝ հայ ընթերցող հասարակութեան:*

*Գեղեցիկ զուգադիպութեամբ, մինչ մեր հաճընցի հայրենակիցները կը յիշատակեն Հաճընի ինքնապաշտպանութեան 90-ամեակը, Հայկազեան Համալսարանի Հոգաբարձութիւնը, տնօրէնութիւնն ու Հայկազեան Համալսարանի տեղական յանձնախումբը փառաւոր հանդիսութեամբ պիտի նշեն այս հաստատութեան 55-ամեակը: Այս հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 12 Նոյեմբեր, 2010ին, երեկոյեան ժամը 7ին, Glendale Hilton Hotel-ի մէջ (100 West Glenoaks Boulvard): Թերեւս աւելորդ չի սեպուիր յիշեցնելը թէ՝ Փրոֆ. Արմենակ Հայկազեան Հաճընցի էր, ու Գոլէճին հիմնադրութեան մէջ գլխաւոր դեր ունեցան Հաճընցի Մեխակեան ընտանիքը - Հայկազեանի դուստրը՝ Մէյրին ու իր ամուսինը՝ Աւագ Մեխակեան:*

*Այս գրութիւնը կ՚ուզեմ վերջացնել անձնական վկայութիւնով մը՝ Հայկազեան Գոլէճին իմ կեանքիս մէջ ունեցած դերին շուրջ: Մեր ընտանիքին տնտեսական նեղ կացութեան մատնուած ըլլալուն պատճառաւ ես չէի կրցած շարունակել իմ ուսումս նախակրթարան մը աւարտելէ ետք: Կեանքիս յաջորդ քսանմէկ երկար տարիները անցուցի շուկայի մէջ հետեւելով զանազան արհեստներու եւ առեւտուրի: Սակայն, ուսման խոր ծարաւը գիս մատնած էր խռովեալ հոգեվիճակի: Յատկապէս, մեծ եղած էր փափաքս հետեւիլ իմ հօրս օրինակին, նուիրելով ինքզինքս հոգեւոր ծառայութեան: Հոգեւոր Հովիւ ըլլալու համար անհրաժեշտ էր որ ունենայի համալսարանական չորս տարուան ուսում, ու որմէ ետք աստուածաբանական երեք տարուան մասնագիտութիւն: Երեսուն երեք տարեկանիս հրաժեշտ տուի գրախանութիս, ու տունը նստելով հետեւեցայ ինքնուսուցումի որուն մէջ շատ օգտակար եղան իմ գոլէճական ուսումի տէր տիկինս ու քենիս: Նպատակս էր մասնակցիլ Անգլիական քննութեան մը՝ ու տիրանալ Բարձրագոյն Վարժարանի համապատասխան վկայականի: Որմէ ետք միայն կրնայի ընդունուիլ Պէյրութի Ամերիկեան Համալսարանը: Սակայն, Լիբանանի 1958ի քաղաքացիական պատերազմը արգելք եղաւ որ կարենամ մասնակցիլ ուսումնական այդ ծրագրին: Որոշեցինք ընտանիքով փոխադրուիլ Պէյրութ, ու դիմել նոր հիմնուած Հայկազեան Գոլէճը: Հոս էր որ պատահեցաւ հրաշքը: Վեր. Դոկտ. Ճան Մարգարեան՝ Հիմնադիր նախագահը Գոլէճին, առիթ ընծայեց ինծի որ առանց երկրորդական վարժարանի վկայական ունենալու եւ փորձի համար՝ մտնեմ freshman կարգը: Ծանր էր աշխատանքս, նաեւ ընտանիքիս համբերութիւնը...: Սակայն, Աստուծոյ օգնութեամբ եւ ընտանիքիս ու բարեկամներուս քաջալերութեամբ յաջողեցայ աւարտել տարին բարձրագոյն նիշերով: Այդ ճամբով նաեւ քննութեան մասնակցելով յաջողեցայ ընդունուիլ Պէյրութի Ամերիկեան Համալսարանի sophomore կարգը, ինչպէս նաեւ Պէյրութի Աստուածաբանական ճեմարանը: Մնացեալը պատմութիւն է. կարեւորը այն էր որ շնորհիւ Հայկազեան Գոլէճի, ես առանձնաշնորհումը ունեցած էի ուսումս շարունակելու, ու Հոգեւոր Հովիւ մը ըլլալու: Կարեւորը այն է որ ինծի պէս շատեր որոնք զանազան պատճառներով չէին յաջողած իրենց ուսումը շարունակելու, Հայկազեան Գոլէճը՝ գէթ այդ տարիներուն դարձաւ յաջողութեան առաջնորդող ոտնակայան մը անոնց համար: Այսօր, հազարաւորներու կը հասնի այն հայորդիներու թիւը՝ որոնք Հայկազեան Համալսարանի ընձեռած նիւթական ու բարոյական դիւրութիւններու շնորհիւ յաջողած են իրենց ապագան կերտել:*

*Արդ, սրտանց կը շնորհաւորենք Հայկազեան Համալսարանի ազգանուէր ծառայութեան 55 ամեակը, ու կը մաղթենք եւ կ՚աղօթենք որ ան շարունակէ իր սուղ ու թանկագին առաքելութիւնը մեր ազգին մէջ ի փառս Աստուծոյ եւ ի խնդիր մեր ժողովուրդին իմացական, հոգեւոր ու բարոյական վերելքին, ու այս բոլորը իբրեւ վկայութիւն մեզ շրջապատող բարեկամ ու թշնամի ցեղերուն եւ ժողովուրդներուն:*

## ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

*Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան «Արսէն Կիտուր» մասնաճիւղի անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 10 Նոյեմբեր 2010ին, երեկոյեան ժամը 8ին, կլենտէյլի կեդրոնին մէջ:*

*Ծանօթ. Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի:*

*Ներքին Դիւան*

*********

*Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան «Փարամազ» մասնաճիւղի անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 17 Նոյեմբեր 2010ին, երեկոյեան ժամը 8ին, Փասատինայի կեդրոնին մէջ:*

*Ծանօթ. Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի:*

*Ներքին Դիւան*

*********

*Անդամական Ժողով*

*Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան «Սապահ Կիւլ» մասնաճիւղի անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 24 Նոյեմբեր 2010ին, երեկոյեան ժամը 8ին, կլենտէյլի կեդրոնին մէջ:*

*Ծանօթ. Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի:*

*Ներքին Դիւան*

## ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

*Պրն. Գէորգ Գալուստեան գնահատելով «Մասիս» շաբաթաթերթի բովանդակութիւնը $100 կը նուիրէ «Մասիս»ին:*


# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name: ----------------------------------------**
**Address: ----------------------------------------**
**City: --------- State:--------- Zip Code:------**
**Country: ------------**
**Tel :----------------------- Fax : ------------------------**


Armenia Fund & Karoun Dairies Present
1st Annual Benefit Concert
ArmeniaFund
All Proceeds to Benefit Armenia Fund Telethon 2010 Water Projects
Sunday, November 21, 2010 | 7:30PM
WATER IS LIFE
Sofi Mkheyan
Eva Rivas
Andre
Razmik Amyan
Students of the Armenian State Theater of Song
Musical Director
Artur Grigoryan
Masters of Ceremony
Hrant Tokhatyan & Anita Hakhhverdyan
THE PASADENA CIVIC
Command the Best
Pasadena Civic Auditorium
300 East Green Street
Pasadena, CA 91101
ticketmaster
Tickets start at $30
For Tickets
Call 1-818-265-0506 or 1-800-888-8897
or log on to www.ticketmaster.com